ՕՐԱԳՐՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԱՍՏԻԵՐԱՍԻՐՈՒԹԵԱՆ

1862

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԳՆԱՑՔ.

ԱՄՓՈՓԵՑՍՐ 4.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

	Եր.
ՐՆՆԷ ՇԱՏՕՐԻԱՆԻ. Ս. Նազարեանց	145 — 173
ՓԱՂԱՓԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՆԻՒԹԵՐԸ. Ս. Նազարեանց	174 — 191
ԱԶԱՏ ՄԱՐՔ. Բանաստեղծութիւն Ս. Շահազիզեանց	192

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ,

ВЪ ТИПОГРАФІИ ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ.

1862.

ԵՊՐԻԼ 1862 ԹՈՒԱԿԱՆԻ·

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ·

ՔԵՆԷ

(ԳՐՔԻ ՇԱՒՕԲՐԻԱՆ ՓՐԱՆՖԼԻՆԱՑՒՈՑ)

Բենէն եկաւորելով Նաչէզացոց մէջ, ստիպուած էր կին առնուլ իւրեան, Ինդիանացոց բարք ու վարքին յարմարուելու համար. բայց նա չէր ապրում այդ կնոջ հետ: Մի տերութիւն քարշումէր նորան դէպ ի անտառների խորքը, նա մենակ անցուցանումէր այն տեղ ամրողջ օրեր և երեսումէր վայրենաբնակների մէջ վայրենի: Բայ ի Շաբտասից որ նորա հայրապերն էր, և Հայր Սուէլից որ միսիօներ էր Բողալիա անուն ամուր տեղում, նա հրաժարուել էր բոլոր մարդերի հաղորդակցութիւնից: Այս երկու ծերունիքը ստացել էին մեծ իշխանութիւն նորա սրտի վերայ. առաջինը մի քաղցր ներողամտութեամբ, միւսը, դորա հակառակ, մի չափազանց խըստութեամբ: Սկսեալ կուղբերի որս գնալու օրից, ուր կոյր Սաշեմը պատմել էր իւր գլխի անցքը Բենէին, սա երբէք կամեցած չէր խօսել իւր գլխի անցքի վերայ: Բայց Շաբտասը և միսիօնները փափագելով յանկանումէին գիտել թէ ինչ վատաբաղդութեամբ մի բարետոհմ Եւրոպացի ստիպուած էր յանձն առնուլ այդ օտարոտի գործը, թաղել իւր անձը Լուիզիանայի անապատների մէջ: Բենէն իւր զանազանութեանը պատճառ էր բերել միշտ այն, որ իւր

դևի անցքը չէր արժանի այնքան ուշադրութեան, որ և, ինչպէս ասումէր նա, բովանդակվումէ իւր մտքի խորհուրդներով և իւր զգացմունքով։ Բայց թէ ինչ անցք ստիպել էր ինձ տեղափոխուիլ դէպ ի Ամերիկա, յաւելացնումէր նա, այդ բանը պարտ եմ՝ ես թաղել մի միշտ ենթակայական մոռացութեան մէջ։

Մի քանի տարի անց կացան այսպէս, և երկու ալեւորքը չկարողացան դուրս քաշվել նորանից իւր գաղտնիքը։ Մի նամակ որ նա ստացել էր Եւրոպայից, օտար աշխարհների առաքելագործութեան դիւանի ձեռքով, այնպէս կրկնապատկեց նորա տրտմութիւնը, որ նա փախչումէր միևչև անգամ իւր ծերունի բարեկամներից։ Նոքա տեսանելով նորա ընթացքը, կս առաւել տեղիք ստացան ստիպել նորան բանալ նոցա իւր սիրտը. նոքա գործ դրեցին այն բանի մէջ այնքան խոհեմութիւն, այնքան մեղմութիւն և ծանրութիւն, որ նա վերջապէս հարկադրուած էր լցուցանել նոցա կամքը։ Այսպէս նա ժամադիր եղաւ նոցա հետ, պատմելու նոցա ոչ թէ իւր դևի անցքը, որովհետև չունէր այդպիսի անցք, այլ իւր սրտի ծածուկ զգացմունքը։

21 ին այն ամսի, որին վայրենաբնակքը ասումեն Թռչներէ լուսն, բնէն դիմեց դէպ ի Շաքտասի խուղը։ Նա տուեց բաղուկը կայր Սաշեմին և տարաւ նորան մի սասափրասեան ծառի տակ, Մեշասերէի գետնզրում։ Հայր Սուէլը անյապաղ նկաւ ժամադրած տեղը։ Աւտւօտը բացվումէր. փոքր ինչ հեռի գաշտավայրումը նկատվումէր Նահկացոց գիւղը իւր թթենու ծառաստանով և խուղերով որ նմանումէին մեղուների փեթակի։ Ֆրանսիական գաղթաշէնքը և ամուր տեղը Բոզալիա երևումէր աջ ձեռքի վերայ գետեզրում։ Վրաններ, կիսաշէն տուներ, սկսած ամրոցներ, վարած հողեր սեամորթ մարդերի բազմութեամբ, ժողովք սպիտակամորթ մարդերի և Ինդիանացոց, ցուցանումէին այս վոքրիկ տարածութեան մէջ ընկերական ու վայրենի բարքի ներհակութիւնը։ Դէպ ի արևելք, տեսարանի հեռակայ խորքումը սկսանումէր արեգակը երևել Ապալաշէսի ջաղջախուած կատարների մէջ, որ նկարվումէին որպէս կապտագոյն տառեր երկնքի ոսկեփայլ բարձրութիւնների մէջ. արևմտեքումն Մեշասերէն գլորումէր իւր ջրերը վսեմափառ հանդարտութեան մէջ և եղերաւորումէր այս պատկերացոյցը մի անպատմելի մեծ վայելչութեամբ։

Եղիտասարդը և միսիոնները մի քանի ժամանակ հիացած քննումէին այս գեղեցիկ տեսարանը, ցաւելով Սաշեմի վերայ որ կարող չէր աւելի վայելել այդ գեղեցկութիւնքը. ապա հայր Սուէլը և Շաքտասը նստան կանաչ խոտի վերայ, ծառի ոտքում։ Բենէն տեղաւորվեցաւ երկուքի մէջ տեղում, և մի րոպէ լռութենից յետոյ խօսեց նա դէպ ի իւր ալեւոր բարեկամները այսպէս.

«Ես կարող չեմ, սկսանելով իմ պատմութիւնս, պաշտպանել իմ անձը ամբիծապարտութեան երեսից։ Շեր սրտերի խաղաղութիւնը, պատկառելի ծերունիք, և բնութեան հանդարտութիւնը իմ շրջակայքումն ամաչեցնումեն ինձ իմ սրտի խառնակութեան և ալեկոծութեան վերայ։

Ի՛նչքան ցաւակից լինելու էիք դուք ինձ. ի՛նչքան ողորմելի թուելու էին ձեզ իմ միանգամայն տառապանքս։ Դուք, որ սպառել էք կեանքի բոլոր ցաւերի բաժակը, ինչ պիտի մտածէիք մի երիտասարդի վերայ որ չունի ոչ զօրութիւն և ոչ առաքինութիւն, որ իւր մէջ յատկապէս զտանումէ իւր տանջանքը, և կարող է միայն դանդատել այն ցաւերի վերայ, որ ինքը հասուցել է իւրեան։ Աւա՜ղ. մի գտատապարտէք նորան. նա պատժուած է արդէն չափից դուրս։

«Ես ծնել եմ դէպ ի լոյս աշխարհ իմ մօր մահու դնովը. ինձ երկաթով դուրս քարշեցին նորա արգանդից։ Ես ունէի մի եղբայր որին օրհնեց իմ հայրը, որովհետև նա տեսանումէր նորա մէջ իւր երէց որդին։ Բայց ես, կանուխ թող տուած օտար ձեռքի, մեծացայ հեռի հայրական տանից։

Իմ բնութիւնը սաստիկ էր, իմ բարքս անհաւասար. ես երբեմն աղմկասէր և զուարճ, երբեմն լուռ և տրտում, հաւաքումէի իմ չորս կողմը իմ մանուկ ընկերակիցքը, ապա յանկարծ թողնելով նորանց երթումէի նստել մեկուսի (առանձին), նայելու փախստական ամպի վերայ կամ թէ լսելու անձրևի թափուիլը տերևների վերայ։

Ընդհանուր աշուն ես վերադառնումէի դէպ ի իմ հայրենական ամրոցը որ դրած էր անտառների մէջ տեղ, մի լճի մօտ, մի հեռակայ գաւառում։

Ալեկոծ և անազատ իմ հօրս ներկայութեամբ, ես գտանումէի հաճութիւն և բաւականութիւն իմ քոյր Ամելիայի մօտ միայն. մի քաղցր յարմարակցութիւն բնութեան և ճաշակի միաւորումէր ինձ այս քուէր հետ. նա մի պոքր աւելի հասակաւոր էր, քան թէ ես. մեք սիրումէինք միասին վեր ելանել դէպ ի բլուրները, թիավարել լճի վերայ, շրջել անտառների մէջ ծառերի տերևաթափութեան միջոցին. զբօսանք որոնց հիշատակը դեռ ևս քաղցրացնումէ իմ սիրտը։ Ո՜վ ցնորք մանկութեան և հայրենական աշխարհի, դուք երբէք կորուսանում չէք ձեր քաղցրութիւնը։

Երբեմն քայլումէինք մեք լռութեամբ, ականջ դնելով աշնան խուլ մունչիւնին, կամ թէ աղմկին ցամաք տերևների, որ մեք տերութեամբ ոտնակոխ էինք առնում, իսկ երբեմն, մեր անմեղ խաղերի մէջ վազումէինք ըմբռնելու ծիծեռնակը մարգագետնի մէջ, ծիածանը անձրևոտ բլուրների վերայ. երբեմն նոյնպէս շշնջումէինք ոտանաւորներ որ ներշնչումեր մեր մէջ բնութեան տեսարանը։ Լինելով մանուկ, պաշտումէի ես մանկայքը. չկայ ոչինչ այնպէս բանաստեղծական, որպէս մի սիրտ տասն և վեց տարեկան պատանու, նորա ախտերի գալարութեան մէջ։ Կեանքի առաւօտը այնպէս

է, որպէս օրի առաւօտը, լի պարզութեամբ, պատկերներով և դաշնակութեամբք։

Կիւրակէ և տօնի օրերին ես շատ անգամ լսած եմ մեծ անտառումը, ծառերի միջից, հնչիւնքը հեռաւոր զանգակի որ կոչումէր դաշտի մարդիկը դէպ ի եկեղեցի։ Թիկն տալով մի կնձնի ծառի բունի, ես լսութեամբ լսումէի այդ երկիւղած ձայնարկութիւնը։ Ամեն մի թնդիւնը պղնձամետաղի բերումէր իմ պարզամիտ սրտին շինական բարքի անմեղութիւնը, միայնութեան հանդարտութիւնը, կրօնի գեղեցկութիւնը և իմ առաջին մանկութեան յիշատակների քաղցր տխրամտութիւնը։ Ո՜հ, ո՛ր սիրտը թէև լինէր շատ կոպիտ, չէ զգացել դող, լսելով իւր հայրենական աշխարհի զանգակների ձայնը, այն զանգակների որ ուրախութեամբ դողացել են նորա օրօրոցի վերայ, որ հրատարակել են նորա գալուստը աշխարհ, որ նշանակել են նորա սրտի առաջին զարկը, որ քարոզել են լսողը շրջակայ տեղերում նորա հօր սուրբ հրճուանքը, նորա մօր ևս աւելի անպատմելի ցաւերը և ուրախութիւնքը։ Այս ամենայնը գտանվումէ այն բոլոր կախարդական երաշների մէջ, որոց մէջ ընկղմումէ սիրտը հայրենական աշխարհի զանգակի ձայնը. կրօն, գերդաստան, հայրենիք և օրօրոցը և գերեզմանը, և անցեալը և ապագան։

Այո՛, Ամելիան և ես վայելումէինք, աւելի քան թէ որ և իցէ անձն, այս խորհրդաւոր և քնքուշ իդէայքը. պատճառ, մեք երկուքս ունէինք մի միտքը տրտմութիւն մեր սրտի խորքի մէջ. մեք ստացել էինք դարան Աստուծուց կամ թէ մեր մօրից։

Այլ իմ հօրս հասաւ մի հիւանդութիւն որ մի քանի օրի մէջ տապալեաց նորան դէպ ի գերեզման։ Նա աւանդեց հոգին իմ գրկումը։ Ես ծանօթացայ մահուն այն մարդու շրթունքի վերայ, որ ինձ տուել էր կեանք։ Այս տպաւորութիւնը ստատիկ էր, նա տևումէ դեռ ևս։ Այս առաջին անգամն էր, որ հոգու անմահութիւնը պայծառապէս պատկերացաւ իմ աչքի առաջև։ Ես կարող չէի հաւատալ թէ այս անշնչացած մարմինը էր իմ մէջ մտածութեան հեղինակը. ես զգումէի, որ նա պիտի յառաջացած լինէր մի այլ աղբիւրից, և մի սուրբ ցաւի մէջ որ մտեներումէր ուրախութեան, յայս ունէի ես մի օր միաւորուիլ իմ հօր հոգու հետ։

Մի այլ տեսիլ հաստատեց ինձ այս բարձր գաղափարի մէջ։ Իմ հօր դէմքի գծագիրքը ստացել էին գագաղի մէջ մի վսեմական բան։ Ինչո՞ւ համար այս զարմանալի գաղտնիքը չպիտի լինէր մեր անմահութեան ցուցակութիւնը։ Ինչո՞ւ համար մահը, որ գիտէ ամենայն բան, չպիտի փորագրած լինէր իւր զոհի ճակատի վերայ մի այլ տիեզերքի գաղտնիք։ Ինչո՞ւ չպիտի լինէր գերեզմանի մէջ որ և իցէ մեծ տեսիլ յաւիտենականութեան։

Ամելիան, ցաւից ճնշուած, առանձնացել էր մի աշտարակի ներսում, որ տեղից լսումէր գումբական ամրոցի կամարների տակ թնդիւնը ուղարկաւոր քահանաների երդեցողութեան, և թաղման զանգակի ձայնը։

Ես ուղարկաւորեցի իմ հայրս դէպ ի նորա վերջին հանգստարանը։ Հողը փակուեցաւ իւր կողոպուտի վերայ. յաւիտենականութիւնը և մոռացութիւնը ճնշեցին նորան իւրեանց բովանդակ ծանրութեամբ. նոյն երեկոյին սառնութեամբ անցանումէին մարդիկ նորա գերեզմանի վերայից. բաց ի նորա դուստրի և որդու համար, այնպէս էր արդէն միւսերի համար, որպէս թէ նա երբէք կացած չէր աշխարհի երեսին։

Պէտք էր թողուլ հայրենական տունը, որ դարձել էր իմ եղբօր ժառանգութիւնը. ես Ամելիայի հետ առանձնացայ մեր հին ազգականների մօտ։

Կեանքի խաբէական ճանապարհների մուտքի վերայ կանգնած, քընդումէի ես նորանց մի ըստ միոջէ, առանց համարձակուելու ոտք կոխել դռան վերայ։ Ամելիան շատ անգամ խօսք ունէր իմ հետ կրօնաւոր կեանքի բաղդաւորութեան վերայ. նա ասումէր ինձ, որ ես մի հատ կապն էի որ նորան յետ էր պահում աշխարհի մէջ, և նորա աչքերը տրտմութեամբ մխած էին իմ վերայ։

Միտս այս երկիւղած խօսակցութեամբ շարժուած, ես յաճախ ուղղումէի իմ գնացքը դէպ ի մի մենաստան որ դրացի էր իմ նոր օթեւանին. այո՛ մի րոպէ փորձութեան մէջ էի ես թաքուցանելու այն տեղ իմ կեանքը։ Երանի՜ նոցա, որ աւարտել են իւրեանց ճանապարհորդութիւնը, առանց հեռանալու նաւահանգստից, և որ չեն անցուցել իմ պէս անօգուտ օրեր երկրիս վերայ։

Եւրոպացիք ալէկոծուած անդադար, ստիպուած են եղել շինել իւրեանց համար առանձնատեղիք։ Ինչքան աւելի խռովալից և աղմկուած է մեր սիրտը, այնքան ևս սիրելի է մեզ հանդարտութիւնը և լռութիւնը։ Այս հիւրատունքը իմ երկրի, լինելով անբաղդների և տկարների համար բաց, շատ անգամ ծածկած են ձորերի մէջ, որ կրումեն իւրեանց սրտում անորոշ ախտը անբաղդութեան և յոյսը մի ապահովութեան. երբեմն գտանումեն դրբա և բարձր սարերի վերայ, ուր կրօնասէր հոգին որպէս մի լեռնային բոյս ասես թէ բարձրանումէ դէպ ի երկինք, մատուցանելու նորան իւր անուշահոտութիւնքը։

Ես տեսանումեմ դեռ ևս վսեմափառ խառնուրդը ջրերի և անտառների այս հին արքայական մենաստանի, ուր մտածումէի ես աղատել իմ կեանքը բաղդի փոփոխականութենից։ Ես թափառումեմ դեռ ևս, օրը երեկոյանալով, այս ձայնարձակ և առանձնական վանքերի մէջ։ Երբ որ լուսինը կիսով չափ լուսաւորումէր կամարակապների սիւները և նկարումէր նոցա տուերը հանդիպակաց պատի վերայ, ես դադարեցայ ղննելու խաչը, որ նշանակումէր մահու դաշտը և այն երկարաբոյս խոտերը որ աճումէին գերեզմանաքարերի մէջ։ Ով մարդիկ, դուք, որ ապրելով աշխարհից հեռի, կեանքի լռութենից անցել էք դէպ ի մահու լռութիւնը, ինչ զղջանքով այս երկրից ձեր գերեզմանները լցուցանումէին իմ սիրտը։

Այդ բնական անկայունութիւն էր, թէ կանխակալ վատ կարծիք որ ես ունէի մենաստական կեանքի վերայ, ես փոխեցի իմ դիտաւորութիւնքս, ես որոշեցի ճանապարհորդել։ Ես հրաժարական ողջոյն տուեցի իմ քոյրս, նա գրկախառնեց ինձ մի սրտաշարժութեամբ, որ նմանութիւր ուրախութեան, որպէս թէ նա երջանիկ կը լինէր թողնել ինձ. ես չկարողացայ փախչել մի դառն խորհրդածութեան երեսից մարդկային բարեկամութիւնների անհաստատութեան վերայ։

Ա՛յնու ամենայնիւ վառուած սրտով, ես մենակ ձգեցի իմ անձը այս աշխարհի մրրկալից ովկիանոսի մէջ, որի ոչ նաւահանգիստներին և ոչ ծովածայռերին ծանօթ էի ես։ Նախ և յառաջ տեսութիւն գնացի ես այն ազգերին, որ չկան աւելի. ապա շրջեցայ Հռոմի և Յունաստանի աւերակներ մէջ, աշխարհներ ազգու և մեծխնամ յիշատակի, ուր տաճարները թաղած են հողի տակ և թագաւորների մատուռները ծածկած են փշերի տակ։ Ո՜վ զօրութիւն բնութեան, և տկարութիւն մարդու. մի հասկ խոտ շատ անգամ ձեղքումէ ամենակարծր մարմարիոնը այս գերեզմանների որ այս բոլոր մեռածները, այնքան կարողք, երբէք բարձրացնելու չէին։

Երբեմն մի բարձր սիւն երևումէր մենակ կանգնած մի անապատի մէջ, ինչպէս մի մեծ մտածութիւն միջոց առ միջոց բարձրանումէ մի հոգու մէջ, որ ժամանակը և անբաղդութիւնը անշէն էր կացուցել։

Ես խորհրդածութիւնք էի գործում այս յիշատակարանների վերայ ցերեկի բոլոր դիպուածների և բոլոր ժամերի մէջ։ Երբեմն նայն իսկ արևը, որ ականատես էր եղել այս քաղաքների հիմնարկութեանը, մայր էր մտանում վսեմափառ կերպով, իմ աչքի առաջև, նոցա աւերակների վերայ. երբեմն լուսինը բարձրանալով մի պարզ երկնակամարի վերայ, երկու կիսով չափ փշրած մարմարիոնների մէջ, ցուցանումէր ինձ գունաթափ մահու գերեզմանները։ Շատ անգամ ի ներքոյ ճառագայթների այս լուսաւորիս որ տնուցանումէ քաղցր երաշները, ես կարծումէի տեսանել յիշատակների ոգին, նստած ամենևին մտախոհ իմ մօտիս։

Ահայց ես վաստակեցայ քրքրելով դագաղները, ուր չափից դուրս յաճախ բարձրացնումէի միայն մի յանցաւոր փոշի։

Ես կամեցայ տեսանել, արդեօք կենդանի ազգերը ցոյց կը տային ինձ աւելի առաքինութիւնք և սակաւ անբաղդութիւնք քան թէ անցած գնացած ազգերը։ Երբ որ ես մի օր մանէի գալիս մի մեծ քաղաքում, անցանելով մի ապարանքի յետքից, մի առանձնացած և անապատ գաւիթի մէջ նկատեցի ես մի արձան որ մատով ցոյց էր տալիս մի տեղ, մարդասպանութեամբ վատահամբաւած [1]։ Ես զարհուրեցայ այս տեղերի լուութենից.

---

[1]) Լանդոնում, Ուայթ-Չափել տեղի յետքում, ուր գտանվումէր Կարոլոս երկրորդի արձանը։ Սա էր որդի անբաղդ Կարոլոս առաջինի, Անգլիայի թագաւորի, որ իւր, ժո-

հողմը միայն հեծեծումէր ողբերգական մարմարիոնի չորս կողմը։ Մշակներ անհոգութեամբ պատկած էին արձանի ոտքումը, կամ թէ տաշումէին քարեր, սուլելով։ Ես նոցանից հարցրեցի թէ ինչ խորհուրդ ունէր այս յիշատակարանը. միները հաղիւ թէ կարողացան ինձ ասել դորան, միւսերը չգիտէին այն ձախորդ անցքը որ պատկերացնումէր այդ արձանը։ Ոչինչ բան չտուեց ինձ ճշմարիտ չափ ու կշիռը կեանքի անցքերի և այն մասին թէ ինչ քան չնչին բան էինք մեք մարդիկս։ Ի՞նչ են եղել այն մարդիկը որ արած են այնքան աղմուկ և շլոթի։ Ժամանակը արել է մի քայլափոխ, և երկրի երեսը դարձեալ ստացել է իւր կերպարանքը։

Ես ճանապարհորդելով այս տեղ ու այն տեղ, որոնեցի մանաւանդ ճարտարապետները և այն աստուածեղէն մարդիկը, որ երդումն աստուածները իւրեանց քնարի վերայ և երջանկութիւնը այն ազգերի որ մեծարումեն օրէնքը, կրօնը և դերեզմանքը։

Ա՛յս երգեցողքն են աստուածեղէն տոհմից. նոքա ունէին այն մի հատ անհակառակելի քանքարը, որով Աստուած պարգեւատրել է երկիրը։ Նոցա կեանքը է միանգամայն տղայական և վսեմական. նոքա փառաւորումեն աստուածները ոսկեղէն բերանով և են ամենապարզ հոգիքը մարդերի մէջ. նոքա զըուցումեն որպէս անմահ աստուածներ կամ որպէս փոքրիկ մանուկներ. նոքա մեկնումեն տիեզերքի օրէնքը և կարող չեն հասկանալ կեանքի շատ ու շատ հասարակ գործերը. նոքա ունէին զարմանալի գաղափարներ մահու մասին, նոքա մեռանումեն առանց նկատելու, որպէս նորածին երեխայք։

Վալեդոլիայի (Շոտլանդիայի) սարերի վերայ, վերջին տաղերգուն որին լսած են այս անապատներում, երգեց ինձ այն տաղերը, որովք մի քաջ տղամարդ մի ժամանակ մխիթարումէր իւր ծերութիւնը։ Մեք նստած էինք չորս քարի վերայ որ մաշուած էին մամուռից. մի հեղեղատ հոսումէր մեր ոտքի տակ. այծեամներ անցանումէր փոքր ինչ հեռաւորութեամբ մի աշտարակի աւերակների միջով, և ծովերի հողմը լսումէր կծնա գետի մացառների վերայ։ Ա՛յժմ, քրիստոնէական կրօնը, դուստրը բարձր սարերի, տնկել է խաչեր Մորվընի քաջազուններին յիշատակարանների վերայ և շարժել է Դաւթի քնարը նոյն հեղեղատի ափերի վերայ, ուր Օսիանը հնչեցնումէր իւր քնարը։ Ա՛յնպէս խաղաղասէր, ինչպէս Սկովտի աստուածութիւնքը էին պատերազմասէր, քրիստոնէական կրօնը արածումէ այն տեղ հօտեր, ուր Ֆինգալը տալիս էր պատերազմները, և նա տարածել է խաղաղութեան հրեշտակներ այն ամպերի մէջ ուր բնակումէին մարդասպան ցնորքներ։

զվերդին առաջի, սիրական Բուքինգհեմի թեզագրութեամբ յանձն առաւ ոչ թէ միայն մի պատերազմ ընդդէմ Սպանիայի և Ֆրանսիայի, այլև մանաւանդ մնջորութեայս դեպ ի պառող և յանդուգն գործեր, իւր թագաւորական մեծութիւնը պահպանելու համար, և այդպէս բացից իւր համար ճանապարհ դէպ ի գլխատութեան բարձրաւանդակը 1649 թուականին։

Ա՛ղեմի և Ծիծաղադէմ Խտալիան ցոյց տուեց ինձ իւր ճարտարապետական գործերի բազմութիւնը։ Ի՛նչ նուրբ և բանաստեղծական սարսափմամբ շրջումէի ես այս ահագին շինուածների մէջ որ ճարտարութիւնը նուիրել էին կրօնին։ Ի՛նչ լաբիրինթոս սիւների. ի՛նչպէս փոխ առ փոխ հետեւումեն միմեանց աղեղներ և կամարներ. ի՛նչպէս զեղեցիկ են այս ձայները որ լսվումեն տաճարների չորս կողմը, նմանելով ալիքների շառաչիւնին ովկիանոսի մէջ, հողմերի մռնչիւնին անտառների մէջ, կամ թէ Աստուծոյ ձայնին իւր տաճարի մէջ։ Ճարտարապետը, այսպէս ասենք, կատարեալ բանաստեղծի գաղափարքը և նորանց շօշափելի է կացուցանում զգայարաններին։

Այնու ամենայնիւ ի՛նչ էի ուսել ես մինչև այն օրը այնքան չարչարուելով. ոչինչ հաւաստի Հինների մէջ, ոչինչ զեղեցիկ Նորերի մէջ։ Անցեալը և ներկան են երկու անկատար արձաններ. մինը կրճատած դուրս է քարշուած ժամանակների աւերակի տակից, միւսը դեռ ևս չէ ստացել իւր կատարելութիւնը ապագայից։

Ույց, իմ ալևոր բարեկամներ, զուցէ դուք մանաւանդ իրրև անապատների բնակիչք, ղարմացած էք, որ այս իմ ճանապարհորդութեան պատմութեան մէջ ձեր հետ և ոչ միանգամ զբուցել չեմ բնութեան յիշատակարանների վերայ։ Մի օր ես վեր էի ելել դէպ ի կատարը Էտնայի, մի հրաբուղխ սարի որ այրվումէ մի կողմ մէջ։ Ես տեսայ արևաբացը Հորիզոնի անչափելի տարածութեան մէջ իմ ցածումս, Սիկիլեան սեղմած որպէս մի կէտ ոտքիս տակ և ծովը լայնացած ու պարզուած Հեռակայ դաշտավայրերի մէջ։ Այս ուղղակայեաց տեսութեամբ պատկերացոյցի մէջ գետերը երևումէին միայն իրրև աշխարհագրական գիծեր, քարշած մի աշխարհացոյցի վերայ. բայց մինչ մի կողմից իմ աչքս նկատումէր առարկայքը, միւս կողմից նա խորամուխ էր լինում Էտնայի կոկորդի մէջ, նորա վառուն փորոտիքը յայտնի ընծայելով մի սև ծխի թաւ ալզերը դէպ ի դուրս յարձակման մէջ։

Մի երիտասարդ, ախտերով լի, մի հրաբուղխ սարի բերանում նըստած և արտասուելով մանկանացուքը որոնց բնակարանքը հաղիւ թէ նկատումէր իւր ոտքումը, անտարակոյս, ով ալևորը, է մի լոկ նիւթ, ձեր կարեկցութեանը արժանի. բայց որպիսի կարծիք ևս կամիք դուք յղանալ Բենէդ մասին, այնու ամենայնիւ այս պատկերը կացուցանումէ ձեր առաջև նորա բնութեան և կեանքի նկարագիրը. այսպէս ահա ես իմ բոլոր կեանքի մէջ ունեցել եմ աչքիս առաջև մի անչափելի և աննկատելի արարչագործութիւն միանգամայն և մի անդունդք, բացուած շրջակայքումս։

Ինձէն արտաբերելով այս վերջին խօսքս, լռեց և իսկոյն ընկաւ երազական ցնորքի մէջ։ Հայր Սուէլը ղարմացմամբ զննումէր նորան և հինօրեայ Սաշեմը, այլ ևս չլսելով երիտասարդի խօսակցութիւնը, չգիտեր թէ ի՛նչպէս մեկնէր նորա լռութիւնը։

Ռենէն աչքը բևեռելէր մի ինդիանացի բազմութեան վերայ, որ զուարճութեամբ անցանուդառ դաշտավայրից։ Յանկարծ քաղցրացան նորա դէմքի գծագիրքը, արտասուքը թափուեցան նորա աչքից. նա ձայն արձակեց.

«Երջանիկ վայրենակեացք. ո՜հ, ինչու կարող չեմ ես ճաշակել այն խաղաղութիւնը որ միշտ ուղեկից է ձեզ։ Մինչ ես այնքան փորը պտղաբերութեամբ շրջել եմ այնքան շատ աշխարհներ, դուք, հանդարտօրէն նստած ձեր կաղնիների տակ, անցուցել էք ձեր օրերը, առանց համարելու նորանց։ Ձեր խելքը էր միայն ձեր կարիքը և դուք, աւելի լաւ քան թէ ես, հասանուդիք իմաստութեան վախճանին, որպէս երեխան խաղերի և քնի մէջ։ Եթէ այս տխրամտութիւնը, որ ծնանուդ երջանկութեան տարապայմանութենից, երբեմն շօշափուդէր ձեր սիրտը, դուք շուտով դուրս էիք գալիս այս անցաւոր տխրութենից, և ձեր հայեացքը, վերուղղած դէպ ի երկինք, խանդաղատութեամբ որոնուդէր մի անպատմելի անծանօթ էակ որ ցաւակից է աղքատ վայրենակեցին։

Այս տեղ Ռենէի ձայնը կրկին վերջացաւ, և երիտասարդը կախ ձգեց գլուխը կուրծքի վերայ։ Շաքտասը, բազուկը ձգելով ստուերի մէջ, և վեր կալնելով իւր որդու բազուկը, ձայն տուեց խռոված կերպով. «Ւ՛մ որդի, իմ սիրելի որդի». Այս ձայնարկութեամբը ուշը վերադարձած Ամելիայի եղբօր վերայ, և նա ամաչելով իւր տրտմութենից, ներողութիւն խնդրեց իւր Հօրից։

Այնուհետև Հինօրեայ վայրենակեացը ասաց Նորան. «Իմ երիտասարդ բարեկամ, խռովութիւնքը մի սրտի, որպիսի քո սիրտն է, կարող չեն լինել միատեսակ. չափաւորիր միայն այդ բնաւորութիւնը որ արդէն պատրաստել է քեզ այդքան ցաւեր։ Եթէ դու աւելի վշտանուիս քան թէ մի այլ ոք, կեանքի իրողութիւններից, չէ պիտոյ քեզ դորա վերայ զարմանալ. մի մեծ Հոգի պարտ է պարունակել իւր մէջ աւելի ցաւեր, քան թէ մի փոքր Հոգի։ Ցաւալը տար քո պատմութիւնը։ Դու մանես ածել մեզ Եւրոպայի շատ տեղերում. ծանօթացրու մեզ քո հայրենի աշխարհին։ Դու պիտես, որ ես տեսել իմ Ֆրանսիա, և թէ որպիսի յարակցութիւնք կապել են իմ սիրտը դորա հետ։ Ինձ սիրելի կը լինէր լսել պատմութիւնը այն մեծ թագաւորի (Լուդովիկոս տասնևչորսերորդի) որ չկայ այժմուս, և որի փառաւոր օթևանը տեսել եմ ես։ Իմ զաւակ, ես այսուհետև ապրումեմ միայն յիշողութեամբ. մի ալևոր իւր յիշատակներով նմանուդ մեր անտառների հինաւուրց կաղնուն. այս կաղնին այլ ևս չէ զարդարվում իւր յատուկ տերևներով, բայց նա երբեմն ծածկուդ իւր մերկութիւնը օտար բուսականիներով, որ աճել էին նորա հին ճիւղերի տակ»։

Ամելիայի եղբայրը, այս խօսքերով մեղմացած, վեր կալաւ իւր քուեր պատմութեան թելը, այսպէս.

Հաշ, իմ Հայր, ես կարող չէի առնել քեզ պատմութիւնը այդ մեծ դարուս, որի վերջը միայն տեսած եմ ես իմ մանկութեան օրերում, որ և

անհետացել էր, երբ որ դարձեալ մնայ իմ հայրենի աշխարհի մէջ։ Երբեք յառաջացած չէ մի ժողովրդի մէջ այնպիսի զարմանալի և այնպիսի անկարծելի փոփոխութիւն։ Ականատես հանճարների բարձրութիւնը, կրօնի պատկառ մեծարանքը, բարքերի ծանր արժանաւորութիւնը, ամենայն բան յանկարծ դէպ ի ցած էր գլորուել դառնալով խելքի նենգաւորութիւն, ամբարշտութիւն, ապականութիւն։

Օ՜ուր և անօգուտ էր իմ յոյսը վերստին գտանել իմ հայրենիքում մի բան, որով կարող էի մեղմել իմ անհանգստութիւնը, այս կրակը ցանկութեան որ ինձ հալածումէ ամենայն տեղ։ Աշխարհի ուսումնասիրութիւնը ոչինչ ուսուցել էր ինձ, և այնու ամենայնիւ չկար իմ մէջ աւելի տգիտութեան խաղաղութիւնը։

Իմ քոյրս, մի անբացատրելի ընթացքով երևումէր որպես թէ սիրելի էր նորան բազմապատկել իմ տաղտկութիւնը. նա, իմ գալստից մի քանի օր յառաջ թողել էր Փարիզը։ Ես գրեցի քուերս թէ մնածումէի գալ և միանալ նորա հետ. նա շտապով պատասխանեց ինձ, որ մտքից հանէ այս դիտաւորութիւնը, այն պատճառանքով թէ նա չգիտեր հաւաստի թէ դէպ ի որ կողմ տանելու էին նորան իւր գործերը։ Ապա հետև ինչ տխուր խորհրդածութիւնք չարեցի ես բարեկամութեան վերայ, որ պաղեցնումէ ներկայութիւնը, որ ջնջումէ բացակայութիւնը, որ չէ ընդդիմանում անպատգամութեանը և աւելի սակաւ, բաղդաւորութեանը։

Շուտով զգացի ես իմ անձը առաւել միայնակ իմ հայրենիքում, քան թէ եղած էի ես մի օտար աշխարհում։ Ես կամեցայ մի քանի ժամանակ ձգել իմ անձը մի ընկերութեան մէջ որ ինձ ոչինչ մնածելի նիւթ տալիս չէր, որ և չէր հասկանում ինձ։ Իմ սիրտը, որ դեռ ես ոչինչ ախտ մտշել չէր, որոնումէր մի առարկայ, որ կարող էր գրաւել նորան, բայց ես նկատեցի որ իմ տալիքը առաւել էր քան թէ իմ ստանալիքը։ Ո՛չ մի վսեմախօս լեզու էր և ոչ իսկ մի խորին զգացողութիւն, որ մարդիկ պահանջումէին ինձանից. ես զբաղուած էի միայն, իմ կեանքը նուաստացնել, որ նորան հաւասարակշիռ կացուցանեմ ընկերութեանը։ Ամենայն տեղ ընդունուելով իբրև սակաւագիւտ երջանկութիւն խնդրող հոդի, ամաչելով այն պաշտօնից, որ ես լցուցանումէի, օրէ օր տաղտկացած իրերից և մարդերից, ես որոշեցի առանձնանալ քաղաքագաւառի մէջ որ ապրեմ այս տեղ ամենևին անյայտ։

Ակզբումը բաւական սիրելի էր ինձ այս անյայտ և ազատ կեանքը։ Անծանօթ, խառնվածումէի ես ամբոխի մէջ, մարդերի արձակ անապատի մէջ։

Շատ անգամ նստած մի եկեղեցում, ուր լինումէր սակաւ ժողովուրդ, ես անցուցանումէի ամբողջ ժամեր խորհրդածութեան մէջ։ Ես տեսանումէի անբաղդ կանայք գալով այն տեղ և տարածուելով Ամենաբարձրելոյ սեղանի առաջև, կամ թէ մեղաւորներ ծունր խոնարհեցուցած խոստովանութեան

աթոռի մօտ։ Ոչ ոք հետաքրքրուած չէր այս տեղից առանց մի աւելի պայծառ դէմքի, և աղօտաձայն աղաղակները, որ լսելի էին դրսում, երևումէին ալէկոծուած ծիւնը ահաւորների և փոթորիկները աշխարհի, որ զիմումէին հանդստանալու տիրոջ տաճարի ոտքում։ Ով մեծ Աստուած, որ տեսանում ես իմ արտասուքի հոսանքը ծածկապէս, այս նուիրական պատսպարանների մէջ, դու գիտես, թէ քանի՛ անգամ ընկել եմ ես քո ոտքը, աղաչելով քեզ թեթևացնել ինձ կեանքի ծանրաբեռնութենից, կամ թէ փոխել իմ մէջ հին մարդը։ Ո՜հ, ո՛ր մարդը երբեմն չէ զգացել հարկաւորութիւնը վերածնելութեան, մանկանալու հղեղատի ջրերի մէջ, իւր հոգին վերստին կաղդուրելու կեանքի աղբիւրի մէջ։ Ո՛ր մարդը չէ լինում դէպ ի գետին պղտրուած իւր յատուկ ապականութեան բեռնից և անկարող լցուցանել մի մեծ, ազնիւ և արդար գործ։

Երբ որ հասել էր երեկոն, դարձեալ ճանապարհ ընկնելով դէպ ի իմ օթևանը, դադարումէի կամուրջների վերայ, որ տեսանեմ արևամուտը։ Ցերեկի լուսաւորը բոցավառելով քաղաքի գոլորշիքը, ասես թէ ճօճվումէր մի ծանրաշարժ ոսկեղէն հեղանիւթի մէջ, որպէս զարերի ժամացուցի ճօճանակը։ Ապա գիշերը վերայ հասած, հետևումէի դէպ ի տուն, անապատ փողոցների լաբիրինթոսի միջով։ Նկատելով ճրագները որ փայլումէին մարդերի բնակարանի մէջ, ես մտածումէի թէ երի վերայ փոխադրումէի իմ անձը այն ցաւի և ուրախութեան տեսարանների մէջ, որ լուսաւորվումէին այդ ճրագներով, և խորհումէի իմ մէջ թէ այդքան բնակաւոր տանիքների տակ չունէի ես ոչ մի բարեկամ։ Իմ խորհրդածութիւնների մէջ, ժամացոյցը զրոշ զրոշ զարկերով հնչեցնումէր իւր ձայնը գութական կամոդիկի աշտարակից· նոյնը կրկնումէր զանազան հնչիւններով զանազան տեղերից, որչափ մի եկեղեցի հեռի էր միւսից։ Աւա՛ղ, իւրաքանչիւր ժամը ընկերութեան մէջ բացումէ մի գերեզման և թաղել է տալիս արտասուք։

Այս կերպ կեանքը որ սկզբումը շատ քաղցր էր ինձ, շուտով դարձաւ ինձ անտանելի։ Ես տաղտկանումէի կրկնութեամբ մի և նոյն տեսարանների և մի և նոյն դալափարների։ Ես սկսայ քննել իմ սիրտը, հարցանել ինձանից թէ ի՛նչ բանի էր ցանկանում նա։ Ես չգիտէի այդ, բայց մտաբերեցի յանկարծ, թէ անտառները կը վայելչացնէին իմ կեանքը։ Եւ ահա վճռեցի ես մի շինական աքսորանքի մէջ, վերջ դնել մի հաղիւ թէ սկսած ասպարէզի, որի մէջ արդէն կուլ էի տուել ես ամբողջ դարեր։

Ես յանձն առայ այս ձեռնարկութիւնը մի այնպիսի եռանդոտութեամբ, որ ես գործ եմ դնում ամենայն առաջարկութիւնների մէջ. ես անյապաղ ճանապարհ ընկայ, և գնացի թաղելու իմ անձը մի խրճթի մէջ, ինչպէս միանգամ գնացել էի ծովափնայ լինելու աշխարհի հորս կողմով։

Ինձ պարտաւորումէն որպէս մի մարդ անհաստատ ախորժակներով, որ կարող չէի երկար ժամանակ քաղցրանալ մի և նոյն մտացածին պատկե-

րով, որ ընկել էի որս մի երևակայութեան ձեռք, որ շտապում հասանել իմ ուրախութիւնների յատակին, որպէս թէ ծանրաբեռնած էր նոցա տեւականութեամբ։ Ինձ պարտաւորումն, որպէս թէ միշտ վազելով անցանում էի այն նպատակի մօտից, որին կարող եմ հասանել. աւաղ, ես որոնում եմ միայն մի անյայտ բարի, որով տանջում ինձ բնական աղճեցութիւնը։ Ի՞մ մեղքս է արդեօք, եթէ ամենայն տեղ հանդիպում անանցանելի սահմանների, եթէ այն բանը որ արդէն վերջացել էր, չունի իմ աչքում ոչինչ կշիռ։ Այնու ամենայնիւ զգում եմ որ ես սիրում կեանքի ղեկացողութիւնների միատեսակութիւնը, և եթէ տակաւին լինէի ես այնպէս խելագար, որ կարողանայի հաւատալ բաղդաւորութեանը, ապա դորան որոնելու էի սովորութեան մէջ։

Մի կատարեալ միայնութիւն, բնութեան տեսարանը շուտով խորասոյզ արեցին ինձ գրեթէ մի անպատմելի կացութեան մէջ։ Զունելով ոչինչ ազգականք, ոչինչ բարեկամք, այսպէս ասենք, լինելով մի գլուխ աշխարհիս վերայ, դեռ ևս սիրոյ հետ անծանօթ, այնու ամենայնիւ ձանձրացած էի ես մի շատակեցութենից։ Երբեմն կարմրում էի ես յանկարծ և զգում էի, որպէս թէ մի վառուն հեղեղ առուներ թաւիւզում էին իմ սրտի մէջ, երբեմն արձակում էի ակամայ աղաղակներ, և գիշերը միապէս խռովայոյզ էր իմ ննջարանից և արթնութենից։ Ինձ պակաս էր մի բան, իմ կեանքի անդունդը լցուցանելու համար. ես ցած էի իջանում դէպ ի ձորը, բարձրանում դէպ ի սարը, իմ բաղձանքի բոլոր զօրութեամբ կանչելով գաղափարական նիւթը մի ապագայ սիրավառութեան, ես նորան գրկախառնում էի հողմերի փչողութեան մէջ, ես կարծում էի լսել նորան գետի շառաչիւնի մէջ. բոլորը էր այս մտացածին ցնորքը, և աստղերը երկնքում և նոյն իսկ սկզբնապատճառը կեանքի տիեզերքի մէջ։

Այնու ամենայնիւ այս խաղաղ ու խռով կացութիւնը միանգամայն, այս աղքատութիւնը և հարստութիւնը չէր ամենևին զուրկ մի քանի բաղցրութենից։ Մի օր ես զուարճացուցել էի սիրտս տերևաթափ առնելով մի ճիւղ ուռենու մի առուի վերայ և յարակցելով մի գաղափար ամեն մի տերևի հետ, որ հոսանքը քարշում տանում էր։ Մի թագաւոր որ վախենում մի գուցէ մի անկարծելի քաղաքական յեղափոխութեամբ կորցնէր իւր թագը, չէ զգում այնպիսի սաստիկ ահ ու դող, ինչպէս իմն էր, մտածելով ամեն մի պատահման վերայ որ կարող էր կործանել իմ ճիւղի աւերակները։ Ո՜վ տկարութիւն մահկանացուների, ո՜վ մանկութիւն մարդկային սրտի, որ երբէք ծերանում չէ։ Ահա թէ մինչև որ աստիճան երեւակայութեան կարող է ցած իջանել մեր մեծամիտ բանականութիւնը։ Այլև ուղիղ է, թէ շատ մարդիկ կառուցանումն իւրեանց բաղդաւորութիւնը այնպիսի թեթեւակշիռ բանների վերայ, որպիսի էին իմ տերևները ուռենու։

«Ինչպէ՞ս կարող էի բացայայտել այն բաղմութիւնը թռուցիկ ախտերի, որ ես զգումէի իմ զբօսանքների մէջ։ Այն ձայները որ ախտերը հնչեցնումեն մի միայնակեաց սրտի մէջ, նմանումեն այն մինչեւին որ հողմերը և ջուրերը թնդեցնումեն մի անապատի լուռութեան մէջ. մարդս լսումէ այդ ձայները, բայց կարող չէ նկարագրել նորանց։

Աշունը վերայ հասաւ ինձ այս տարակուսանքի մէջ։ Ես մի հոգեպայծառ ուրախութեամբ ներս մտայ փոթորիկների ամիսների մէջ։ Երբեմն կամեցած էի ես լինել միեղ այն թափառական պատերազմողներից հողմերի, մառախուղների և ցնորքի մէջ. երբեմն փափագով կարօտումէի լինել այո՛ մի հովիւ, որ իմ աչքի առաջև ջերմացնումէր իւր ձեռները մայաւների անշան կրակի մօտ, որ նա վառել էր մի անտառի անկիւնում։ Ես լսումէի այն տիրամիտ երգասացութիւնքը, որ յիշեցնումէին ինձ, թէ ամենայն աշխարհում մարդու բնական երգը տխուր է և այն ժամանակ, երբ որ դա բացայայտումէր երջանկութիւն։ Մեր սիրտը է մի անկատար նուագարան, մի քնար, որի վերայ պակաս են լարերը, և որի վերայ ստիպուած ենք մեք հնչեցնել ուրախութեան շեշտերը այնպիսի եղանակով, որ նուիրած էր հառաչանքի։

Յերեկով ես թափառումէի ընդարձակ մայաւների մէջ որ հզերաւորվումէին անտառներով։ Ի՛նչքան փոքր բան հարկաւոր էր ծնուցանելու իմ մէջ քաղցր երազներ. մի ցամաք տերև, որ հողմը հալածումէր իմ առաջև, մի խուղ որի ծուխը բարձրանումէր դէպ ի ծառերի տերևաթափ կատարը, մամուռը որ հիւսիսային հողմի փչելով դողումէր մի կաղնու բունի վերայ, մի բացակայ ապաւաժ, մի անապատ լիճ ուր շառաչումէր թռուածած պրտուն։ Առանձնական զանգակատունը բարձրանալով հեռաստանում, ձորի մէջ, շատ անգամ գրաւել է իմ հայեացքը. շատ անգամ աչքերով հետևել եմ ես տեղափոխական թռչուններին որ թռչումէին գլխիս վերայ։ Ես մտքով նկարագրումէի այն անծանօթ եղերքը, այն հեռաւոր կլիմանները, ուր դիմումէին նորա. ես կամեցած կը լինէի նոցա թևերի վերայ լինել։ Մի ծածուկ բնական ազդեցութիւն տանջումէր ինձ. ես զգումէի որ ես ինքս մի ճանապարհորդ եմ միայն, բայց մի ձայն երկնքից երևումէր թէ ասումէ ինձ. «Ո՛վ մարդ, տեղափոխութեան եղանակը չէ դեռ ես եկած. սպասի՛ր, մինչև կը բարձրանայ մահու հողմը, այնուհետև դու կը պարզես քո առագաստները դէպ ի այն անծանօթ գաւառները որ խնդրումէ քո սիրտը»։

Խարձրացէ՛ք շուտով, դուք ցանկալի փոթորիկներ, որ պարտ էք տանել Րենէն դէպ ի մի այլ կեանքի սահմաններ։ Այսպէս ասելով ես, մեծ քայլերով յառաջ էի երթում, երևոյս բոցավառուած, հողմը փչելով մազերիս մէջ, չզգալով ոչ անձրև, և ոչ եղեամն, լինելով կախարդուած, տանջուած և իրրև թէ կաշկանդուած իմ սրտի դևի ձեռնով։

Վիշերը, երբ հիւսիսային հողմը դղրդումէր իմ խուղը, երբ անձրեւի հեղեղքը թափվումէին իմ տանիքիս վերայ, երբ իմ պատուհանից տեսանումէի լուսինը ակօսելով (ճեղքելով) դիզացած ամպերը, որպէս մի շառագոյն նաւ որ հերկումէր ալիքները, — երեւումէր ինձ, թէ կեանքը կրկնապատիկ զօրանումէր իմ սրտի խորքի մէջ, թէ ես ունեցած կը լինէի կարողութիւն աշխարհներ ստեղծագործելու։ Ո՜հ, եթէ կարողացած լինէի ես մասնակից առնել մի այլ մարդ իմ հոգեպայծառ ուրախութեանը։ Ո՜վ Աստուած, եթէ դու պարգեւած լինէիր ինձ մի կին որպէս ցանկանումէի ես, եթէ դու, որպէս մեր նախահօր մօտ, ձեռքը բռնած բերած լինէիր իմ մօտ մի Եւա, առած իմ մարմնից... երկնայի՜ն գեղեցկութիւն, ես վայր ընկած կը լինէի քո առաջև, ապա գրկախառնելով քեզ, խնդրած կը լինէի Յաւիտենականից տալ քեզ իմ կեանքի մնացորդը։

Բայց ես միայնակ էի, միայնակ ի վերայ աշխարհի։ Մի գաղտնի հալածանքութիւն տիրում էր իմ մարմնիս։ Այս տագնապութիւնը կեանքից, որ ես զգացել էի սկսեալ իմ մանկութենից, վերադառնումէր մի նոր զօրութեամբ։ Մի փոքր յետոյ, և ահա իմ սիրտը այլ ևս չէր տալիս սնունդ իմ մարքին և ես միայն նկատումէի իմ կեանքս, զգալով մի խորին տագնապութիւն։

Ես մի քանի ժամանակ պատերազմումէի ընդդէմ իմ ցաւին, բայց տառնութեամբ և առանց հաստատուն կամեցողութեան յաղթելու նորան։ Վերջապէս չկարողանալով դարմանը մատուցանել այս օտար վէրքին իմ սրտի, որ չէր ոչինչ տեղ և ամենայն տեղ էր, ես որոշեցի հրաժարուիլ կեանքից։

Դու, քահանայդ Ամենաբարձրեալ, որ լսումես ինձ, ներիր մի անբաղդի, որ երկնային տեսութիւնը զրկել էր բանականութենից։ Ես լի էի կրօնով, բայց խօսումէի երբեմն մի տարօրինակ. իմ սիրտս սիրումէր Աստուած, բայց իմացականութիւնս չէր ճանաչում նորան։ Իմ դնացքս, իմ զգացողութիւնքս, իմ մտածութիւնքս էին միայն հակառակաբանութիւն, խաւար, խաբէութիւն։ Բայց, մի՛ թէ մարդս դիտէ միշտ, ինչ որ կամենում նա, մի՛ թէ նա հաւատի է այն բանի մասին, որ նա խորհում։

Խորը միանգամայն փախչում էր ինձանից, բարեկամութիւնը, աշխարհը, պատապարանը։ Ես ամենայն փորձ փորձել էի և ամենայն բան եղել էր ինձ կորստարեր։ Լինելով ընկերութենից մերժուած, Ամենայից բարձի թողի արած, բայց և միայնութիւնը չօգնելով ինձ, ինչ ճար մնում էր ինձ։ Այս էր իմ ջաղջախուած նաւի վերջին տախտակը որի վերայ ես յուսացել էի փրկել իմ անձը, բայց և դժրան զգում էի, որ խորասոյզ էր լինում անդունդի մէջ։

Անպէտ որոշել էի ես վէր կալնուլ իմ վերայից կեանքի ծանր բեռը, բայց յանձն առայ ես իմ բոլոր բանականութիւնը գործ դնել այդ անմիտ ընթացքի մէջ։ Ոչինչ բան տխրում էր ինձ շտապել. ես չժամադրեցի հրաժարման րոպէն, այն խորհրդով, որ երկար վայելչութեամբ ճաշակէի

վերջին րոպէդը կեանքի և ժողովէի իմ բոլոր զօրութիւնքը, մի հինօրեայ մարդու պէս զգաշու, երբ որ իմ հոգին դուրս էր թռչում։

Բայց ես հարկաւոր համարեցի պատրաստութիւնք առնել իմ գրքիս մասին և ստիպուեցայ գրել Ամելիային։ Մի քանի գանգատներ դուրս թռան գրչիցս նորա մտացութեան վերայ, և անտարակոյս թոյլ տուեցի ես, որ դուրս երևէր այն գութը որ առ վորը վորը յաղթահարում սիրտս։ Ախ՛ու ամենայնիւ կարծումէի ես, թէ չմոռանայիք թագուցել էի իմ գազանիքը, բայց իմ քոյրը սովորած լինելով խորամուխ լինել իմ սրտի ծալքի մէջ, գուշակեց առանց դժուարութեան։ Նա վերդնեցաւ այն ստիպական ոճի վերայ որ տիրում էր իմ նամակիս մէջ և իմ հարցմունքից պնդիսի գործերի մասին, որովք ես երբէք պարապած չէի։ Փոխանակ պատասխանելու ինձ, նա իսկոյն, անակնկալ եկաւ ինձ տեսութիւն։

Լաւ զգալու համար թէ ինչպէս մեծ պիտի լինէր յետոյ իմ ցաւի, դառնութիւնը և թէ ինչպէս սաստիկ եղաւ իմ առաջին ուրախութեան հիացքը, վերստին տեսանելով Ամելիան, պիտի ձեզ պատկերացնել մտքով, թէ սա մի հատ անձն էր աշխարհի վերայ որ ես սիրել էի, որ իմ բոլոր զգացողութիւնքս նորանով զբաղանվում էին իմ մանկութեան յիշատակներ քաղցրութեան հետ։ Այսպէս, ես ընդունեցի Ամելիան սրտի մի տեսակ յափշտակութեան մէջ։ Երկար ու ձիգ օրեր անցած էին, որ ես գտել չէի որ և իցէ անձն, որ հասկանար ինձ և որի առաջև կարողացած լինէի բանալ իմ սիրտը։

Ամելիան ընկնելով դիրկս, ասաց ինձ. «Դու ապերախտ, կամիս մեռանել, և քո քոյրը կենդանի է։ Դու երկբայութիւն ունիս նորա սրտի մասին։ Խօսք յառաջ մի բեր, մի արգարացրու քո անձը, ես բոլորը գիտեմ, ես բոլորը հասկացել եմ, որպէս թէ եղած լինէի քո հետ միասին։ Մի՛ թէ կամիր դու ինձ խաբել, ինձ, որ տեսել եմ քո առաջին խնացութիւնների բողբոջիլը։ Ահա քո թշուառ բնաւորութիւնը, քո տաղտկութիւնքը, քո անարդարութիւնքը։ Երդուիր, մինչ ես սեղմում քեզ կուրծքիս վերայ, երդուիր, որ այս վերջին անգամն է, որ դու կամիր անձնասուր լինել քո խելագարութիւններին. երդումն արա, որ դու երբէք չկամիր կարճել քո օրերը։

Այս բառերը արտասանելով Ամելիան, նայեցաւ իմ վերայ ցաւակցութեամբ և զթութեամբ և տուեց ճակատիս համբոյրներ. նա էր գրեթէ մի մայր, նա էր մի աւելի քնքուշ բան։ Ո՜հ, իմ սիրտս գարձեալ բացուեցաւ բոլոր ուրախութիւնների համար. որպէս մի մանուկ կարօտ էի ես միայն, որ մխիթարէին ինձ, ես տեղիք տուեցի Ամելիայի կարող ապդեցութեանը. նա պահանջեց մի հանդիսաւոր երդումն, ես արեցի այդ երդումը առանց տարակուսելու, չկասկածելով իսկ, թէ ապագայումը կարող էի դորանով թշուառանալ։

Ո՛չ աւելի քան թէ մի ամիս պիտի սովորէինք այն քաղցր վայելչութեանը որ ունէր մեր կենակցութիւնը միասին։ Երբ որ առաւօտուն, փոխանակ գտնելու ինձ միայնակ, լսումէի իմ քոյրեր ձայնը, ես զգումէի մի ուրախութեան և բաղդաւորութեան սարսափ։ Ամելիան ստացել էր բնութենից մի աստուածային բան. նորա սիրտը ունէր նոյն անմեղ քաղցրութիւնքը, ինչպէս նորա մարմինը. մեղմութիւնը նորա ախտերի էր անասհման. նորա հոգու մէջ չկար ոչինչ, բայց միայն մի անոյշ և մի փոքր երազամիտ բան. դու ասելու էիր, թէ նորա սիրտը, նորա մտածութիւնը և նորա ձայնը ըղձակաթ էին ներդաշնակաբար. նա ունէր կին մարդու ամբիծութիւնը և սէրը, և հրեշտակի մաքրութիւնը և քաղցրաձայնութիւնը։

Ըսել էր րոպէն, երբ պիտոյ էր ինձ քաւել իմ բոլոր վայր ի վերոյ ընթացքը, իմ խելացնորութեան մէջ ես հասել էի այն տեղ, որ կամէի ճաշակել թշուառութիւն, գոնեայ մի ցաւի ստոյգ նիւթ ունենալու համար. սարսափելի բաղձանք, որին Աստուած իւր բարկութեան մէջ լսեց շատ ու շատ։

Ի՛նչ պիտի յայտնեմ ձեզ, ո՛վ իմ բարեկամներ. տեսէք իմ արտասուքս որ թաւիվումն աչքիցս։ Մի՛ թէ կարող էի ես... Մի քանի օրից յառաջ, ոչինչ կարող չէր դուրս քարշել ինձանից այս գաղտնիքը... Այժմ վերջացած է ամենայն բան։

Ընդհանուր ամենայնիւ, ո՛վ ծերունիք, թո՛ղ այս պատմութիւնս յաւիտեան թաղուած մնայ լռութեան մէջ. յիշեցէք, որ այդ պատմութիւնը արուեցաւ միայն անապատի ծառի տակ։

Ձմեռը վերջանումէր, երբ որ նկատեցի թէ Ամելիան կորսանումէր այն հանգստութիւնը և առողջութիւնը որ սկսել էր ինձ հասուցանել։ Նա նուազումէր, նորա աչքերը փոս էին ընկնում, նորա գնացքը էր թոյլ և նորա ձայնը պղտորուած։ Մի օր, անակնկալ վերայ հասայ ես նորան ամենևին ընկղմած արտասուքի մէջ մի խաչելութեան պատկերի ոտքում։ Աշխարհը, առանձնութիւնը, իմ բացակայութիւնը, իմ ներկայութիւնը, դիշերը, ցերեկը, ամենայն բան վրդովումէր նորան։ Ակամայ հեծեծանք գալիս էին անընդհանալու նորա շրթունքի վերայ. երբեմն, առանց վաստակելու, կարողանումէր նա տանել մի երկար ճանապարհի, իսկ երբեմն հազիւ թէ քարշումէր իւր անձը. նա վեր էր կանումէ և յանկ էր դնումէ իւր գործը, բացումէր մի դիրք առանց կարողանալու կարդալ, սկսանումէր մի խօսք, որ չէր վերջացնում, իսկոյն հեղհեղվումէր արտասուքով և հեռանումէր աղօթելու։

Ընդհատ եղաւ իմ ջանքս վերահասու լինելու նորա գաղտնիքին։ Երբ որ ես հարցուփորձ էի առնում նորանից, գրկախառնելով նորան, նա պատասխանումէր ինձ ժպտմամբ, ակնարկելով, թէ նա ինքը նոյնպիսի կացութեան մէջ էր, որի մէջ ես էի, թէ նա չգիտէր թէ ինչ է պակաս նորան։

Երեք ամիս անց կացան այսպէս, և նորա որպիսութիւնը օրէ օր վատանում էր։ Մի խորհրդաւոր նամակակցութիւն երևում էր ինձ նորա արտասուքի պատճառը. պատճառ, նա երևում էր կամ աւելի խաղաղ կամ աւելի խռոված, միտ դնելով այն նամակներին, որ ստանում էր նա։ Վերջումը, մի օր, այն ժամը, որի մէջ մեք միասին նախաճաշիկ էինք առնում, անցած լինելով, ես դիմում եմ դէպ ի նորա սենեակը. զարհուրմամբ դուռը, ոչ ոք չէ պատասխանում ինձ։ Ես մի փոքր բացում եմ դուռը, բայց ոչ ոք չկայ սենեկի մէջ։ Ես նկատում եմ վառարանի վերայ մի ծրար իմ հասցէով։ Ես վեր եմ կալնում նորան դողալով, բացում եմ և կարդում եմ այս նամակը, որ պահպանում եմ ես, ամենայն ուրախութեան ակտ գալոց օրերում հեռի պահելու իմ սրտից։

ԱՌ ՐԵՆԻ։

«Երկնային տնտեսութիւնը վկայ է ինձ, ով եղբայր, որ ես հազար անգամ կը տայի իմ կեանքս, որ աղատէի քեզ մի րոպէի ցաւից. բայց այն անբաղդութեան մէջ, ուր ես գտանվում եմ, ոչինչ կարող չեմ առնել քո բաղդաւորութեան համար։ Դու կը ներես ինձ, որ ես իրրև յանցաւոր ծածուկ հեռացել եմ քո մօտից։ Ես կարող լինելու չէի ընդդիմանալ քո աղաչանքին, այնու ամենայնիւ հարկաւոր էր ինձ ուղևորուիլ... Աստուած իմ, ողորմած եղիր ինձ։

«Դու գիտես, ով Րենէ, որ ես միշտ ունեցած իմ հակամիտութիւն դէպ ի կրօնաւոր կեանքը. ժամանակ է արդէն արդիւնաւոր կացուցանելու երկային անտեսութեան ազդարարութիւնը։ Ինչու համար այդքան երկար յապաղել եմ ես. Աստուած պատժումէ ինձ դորա համար։ Ես քո համար մնացել էի աշխարհում... Ներիր, ես ամենևին խռոված եմ այն ցաւից, որ զգումեմ, հրաժարուելով քեզանից։

Այժմ ահա, նազելի եղբայր, շատ ու շատ զգումեմ ես հարկաւորութիւնը այս պատսպարանների, որոնց ընդդէմ տեսած եմ քեզ շատ անգամ վեր կենալ որպէս հակառակորդ։ Կան վատաբաղդութիւնք որ յաւիտեան մեզ բաժանումեն մարդերից. ինչ պիտի լինին այնու հետև թշուառ անբաղդ կանայք... Ես աներկմիտ եմ, որ դու ինքդ, իմ եղբայր, գտանելու էիր խաղաղութիւն կրօնի պատսպարանների մէջ. աշխարհը չէ տալիս ոչինչ, որ լինէր քեզ արժանի։

«Ես չեմ յիշեցնում քեզ քո արած երդումը. ես գիտեմ քո խօսքի հաւատարմութիւնը։ Դու երդուել ես ապրել իմ համար։ Արդեօք կայ մի աւելի թշուառ բան, քան թէ անգադար մտածել, թէ պիտի թողնէինք կեանքը։ Քո բնութեամբ մարդուն շատ հեշտ է մեռանել. հաւատացիր քո քուերը, որ աւելի դժուար է ապրել։

«Հայց, իմ եղբայր, թո՛ղ շուտով քո առանձնութիւնը, որ լաւ չէ քո համար. որոնիր մի զբաղումն։ Գիտեմ, դու դառնապէս ծիծաղուած ես այն հարկաւորութեան վերայ, որի մէջ գտանվում եր մարդ Ֆրանսիայի մէջ, ի պատճառս չունչ առնելու։ Մի՛ արհամարհիր այնքան մեր նախահարց փորձը և իմաստութիւնը։ Աւելի լաւ է, իմ սիրելի բենէ, մի փոքր աւելի նմանել հասարակ մարդերի կարգին և տանել մի փոքր պակաս անբաղդութեան։

«Կարելի է, որ դու գտանես ամուսնութեան մէջ մի թևթևութիւն քո տաղտկութիւններից։ Մի կին և երեխայք կը զբաղեցնեն քո օրերը։ Եւ ո՞ր կինը չէր կամենալու բաղդատորել քեզ։ Քո վատուն հոգին, քո գեղեցիկ ականաւոր հանճարը, քո ազնիւ և ախտաբորբոք կերպարանքը, այդ քո վստահ և քնքուշ հայեացքը, բոլորը գրաւելու է դէպ ի քեզ նորա սէրը և հաւատարմութիւնը։ Ո՜հ, ո՛րպիսի քաղցրութեամբ նա սեղմելու էր քեզ իւր կրկի մէջ և իւր սրտի վերայ։ Ի՛նչպէս նորա բոլոր հայեցուածքը, նորա բոլոր մտածութիւնքը լինելու էին քո վերայ լևնուած, որ հեռատեսութեամբ հալածէին քո ցաւերը։ Նա լինելու էր ամենևին սէր, ամենևին անմեղութիւն քո առաջև, դու պիտի կարծէիր, թէ գտանումես մի քոյր։

«Ո՛չ ուղևորվումեմ դէպ ի մենաստանը... Ա՛յս մենաստանը, ծովի եղբի վերայ կառուցած, յարմարաւոր է իմ հոգուս որպիսութեանը։ Գիշերը, իմ խցի խորքից կը լսեմ ես մռնչիւնը ալիքների որ ողողումն վանքի պարիսպը. ես կը մտաբերեմ այն զբօսանքը որ արած եմ քո հետ, անտառների մէջ, այն միջոցին, երբ որ մեք մտածութիւնք գտանել ծովերի աղմուկը եղևիններուի տարուբերուած կատարի վերայ։ Սիրելի ընկերակից իմ երեխայութեան, այսուհետև չեմ քեզ տեսանելու։ Հազիւ թէ աւելի հասակաւոր քան թէ դու, ես օրօրումէի քեզ քո օրօրոցի մէջ, շատ անգամ մեք քնած ենք միասին. ո՜հ, եթէ մի օր նոյն և մի գերեզման մեզ ամփոփէր միասին, բայց ոչ. ես պարտ իմ միայնակ հանգստանալ այս սրբարանի սառն մարմարիոնների տակ, ուր յաւիտեան հանգստանումեն այն կոյս աղջիկները որ երբէք սիրած չէին։

«Ձգիտեմ, արդեօք կարո՞ղ ես դու կարդալ այս տողերը, կիսով չափ ջնջուած իմ արտասուքով։ Վերջապէս, իմ բարեկամ, մի փոքր վաղ, մի փոքր յետոյ, այնու ամենայնիւ պիտոյ էր մեզ հրաժարուիլ միմեանցից։ Ի՛նչ հարկաւոր էր ինձ շատախօսել քո հետ փոխոխական և փոքրակշիռ կեանքի վերայ։ Դու կարող ես մտաբերել այն երիտասարդ Մ...որ հանդիպեցաւ նաւաբեկութեան Խ-դը-Ֆրանսի մօտ։ Երբ որ դու ստացար նորա վերջին նամակը, մի քանի ամիս նորա մահուց յետոյ, նորա հոգեղէն նշխարքը չհաւին այլ ևս, և այն րոպէն, երբ դու սկսանումէիր նորա սուգը Եւրոպայում, էր նոյնը, երբ աւարտումէին սուգը Հնդկաստանում։ Ի՛նչ բան է մարդս, որի յիշատակը այնքան շուտով կորչումէ։ Երբ որ նորա բարեկամների մի մասը լսումէր նորա մահու համբաւը, և ահա միւս մասը մխիթարուած էր դորա

վերայ։ Ինչ ասեմ, իմ աղնիւ, շատ աղնիւ բնիկ, մի թէ իմ յիշատակս պղպէս արագ կը ջնջուի քո սրտից։ Ով իմ եղբայր, եթէ ես խլումեմ իմ անձը քեզանից ժամանակի մէջ, դորա խորհուրդն այն է, որ չբաժանուիմ քեզանից յաւիտենական կեանքում։

«Ամելիա։

Յետագիր։ «Այս տեղ դնումեմ ես դիւանագիրը իմ զոյքի պարգևատրութեան քեզ։ Լոյս ունիմ, որ դու չես մերժելու այս նշանս իմ բարեկամութեան»։

Կայծակը, որ եթէ զարկած լինէր ոտքիս մօտ, չէր բերելու իմ վերայ աւելի զարհուրանք, քան թէ այս նամակս։ Ի՛նչ գաղտնիք ծածկումեր ինձանից Ամելիան. ով էր ստիպում նորան պղպէս յանկարծ նուիրել իւր անձը կրօնաւոր կեանքի։ Արդեօք վերստին կապել էր նա ինձ կեանքի հետ իւր բարեկամութեան քաղցրութեամբ, որ յետոյ յանկարծ թողնէ ինձ և գնայ։ Ո՛չ, ինչո՞ւ եկաւ նա խոտորեցնելու ինձ իմ խորհրդից։ Մի ախտ ցաւակցութեան կանչել էր նորան իմ մօտ, բայց շուտով ձանձրացած մի ծանր պարտականութենից, շտապումէ նա բարձի թողն առնել մի թշուառական, որ ոչինչ չունէր աշխարհի վերայ լաց ի նորանից։ Մարդիկ մտածումեն, թէ նորա ամենայն բան լցուցել էին, երբ որ խաւիանումեն մի մարդու մեռանելը։ Այսպէս էին իմ գանգատները։ Ցետոյ դարձուցանելով խօսքը իմ վերայ ասումէի. «Ապերախտ Ամելիա, եթէ դու եղած լինէիր իմ տեղումն, եթէ դու, ինչպէս ես, կորած լինէիր քո օրերի դատարկութեան մէջ, ո՛չ, այնուհետև քեզ բարձի թողն արած լինելու չէր քո եղբայրը»։

Այլ, երբ որ ես կրկին և դարձեալ կարդացի Ամելիայի նամակը, ես գտանումէի նորա մէջ մի այնպիսի անպատմելի տրտում և դիմաշարժ բան, որ իմ բոլոր սիրտս հալվումէր։ Յանկարծ զգացայ իմ մէջ մի խորհուրդ, որ տուեց ինձ մի փոքր լոյս. ես մտածեցի, գուցէ թէ Ամելիան յղացել է իւր մէջ մի սիրոյ ախտ դէպ ի մի երիտասարդ, որ չէր համարձակվում խոստովանել ինձ։ Այս կասկածանքը ասես թէ բացատրումէր նորա տխրամտութիւնը, նորա խորհրդաւոր նամակագրութիւնը և այն ախտալից ոճը որ շընչումէր նորա նամակի մէջ։ Ես իսկոյն գրեցի նորան, որ թախանձեմ (շատ ու շատ խնդրեմ) բանալ ինձ իւր սիրտը։

Նա անյապաղ պատասխանեց ինձ, բայց առանց յայտնելու ինձ իւր գաղտնիքը. նա միայն տեղեկութիւն էր տալիս ինձ, թէ նա ստացել էր ազատութիւն նորընծայութենից և թէ նա շուտով կը դնէր իւր ուխտը։

Ես վերադարձայ Ամելիայի կամակորութենից, նորա խօսքերի ծածկամտութենից և նորա թերահաւատութենից դէպ ի իմ բարեկամութիւնը։

Մի քանի տարակուսանքի մէջ լինելով, թէ ինչ պիտի էր որոշել, ես յանձն առայ գնալ դէպ ի Ռ... որ վերջին փորձը փորձէի իմ քրմեր հետ։ Աշխարհը, ուր ես մեծացել էի, գտանումէր իմ ճանապարհի վերայ։ Երբ

որ նկատեցի այն անտառները, ուր ես անցուցել էի իմ կեանքիս միակ բաղդաւոր րոպէքը, ես չկարողացայ զսպել արտասուքս, և ինձ անկարելի եղաւ ընդդիմանալ իմ սրտի դրդողութեանը ասել նոցա իմ վերջին բարեւս մեա։

Իմ աւագ եղբայրը վաճառել էր հայրենական ժառանգութիւնը, և նոր կալուածատէրը չէր բնակում այն տեղ։ Ես հասայ ամրոցին մայր ծառերի միջանցքով, ես ոտով անց կացայ անապատ գաւիթները, դադարեցի պնեւլու փակած կամ կիսով չափ կոտրատած լուսամուտքը, տատասկը որ աճում էր պարսպի ոտքում, տերևները որ պատել էին դռների շէմքը և այն միայնացած սանդուղները, ուր ես այնքան յաճախ տեսել էի իմ հայրը և նորա հաւատարիմ ծառայքը։ Աստիճանները արդէն պատած էին մամուռով. դեղձին մանուշակը աճում էր նոցա բաժանուած և խախուտ քարերի մէջ։ Մի անծանօթ պսհապան սաստկութեամբ բացեց դուռները։ Ես կասկածումի ոտք կոխել շէմքի վերայ. այդ մարդը ձայն տուեց. «Ուրեմն, ներս գնացէք ինչպէս այն օտարական կինը որ մի քանի օր յառաջ եկած էր այս տեղ։ Երբ որ նա յառաջ գնաց, որ ներս մտանէ, սիրտը նուաղեցաւ, և ես ստիպուած էի դուրս տանել նորան դէպ ի իւր սեղը»։ Ինձ հեշտ էր իմաստասիրել թէ ով էր այդ օտարուհին, որ իմ պէս եկած էր որոնել այս տեղերումն արտասուք և յիշատակներ։

Մի րոպէ ծածկելով աչքերս իմ թաշկինակով, ներս մտայ իմ նահապետի տակ։ Ես ծայրէ ծայր շրջեցայ ձայնարձակ սենեակների մէջ, ուր ոչինչ լսելի չէր բացի ի իմ քայլերի աղմկից։ Սենեակները հագիւ թէ լուսաւորուած էին մի աղօտ լուսով որ թափանցում էր փակած լուսամուտների ճեղքից. ես տեսութիւն արեցի այն սենեկին, ուր իմ մայրս մեռել էր, դէպ ի աշխարհ բերելով ինձ, այն սենեկին ուր հայրս առանձանում էր, այն սենեկին ուր ես քնել էի օրօրոցիս մէջ, վերջապէս այն սենեկին, ուր բարեկամութիւնը ընդունել էր իմ առաջին ուխտերը մի քուրս հոգու մէջ։ Ամենայն տեղ դահլիճները մերկացած էին իւրեանց զարդարանքից, և սարդը (գրծծարարը) հիւսում էր իւր ոստայնը բարձի թողի արած ննջարանների մէջ։ Ես շտապով դուրս եկայ այս տեղերից, մեծ քայլերով հեռացայ, առանց համարձակուելու շրջել գլուխս։ Ի՛նչպէս քաղցր, բայց և ի՛նչպէս սրընթաց են այն րոպէքը, որ եղբարքը և քոյրերը անցուցանում իւրեանց մանուկ տարիներում, միաւորուած իւրեանց ծեր ծնողների թևարկութեան տակ։ Մարդուս գերդաստանը տևում է միայն մի րոպէ. Աստուծոյ շունչը ցան ու ցիր է առնում նորան որպէս մի ծուխ, Հազիւ թէ որդին ճանաչում է հայրը, հայրը որդին, եղբայրը քոյրը, քոյրը եղբայրը։ Կաղնին տեսանում է իւր կաղինների ծլումիլը իւր շրջակայքում, բայց այդպէս չէ մարդկութեան որդիների վիճակը։

Հասանելով Բ... խնդրեցի, որ առաջնորդեն ինձ դէպ ի մենաստանը. խնդրեցի որ թոյլ տան ինձ այցելութիւն առնել իմ քուերը. ինձ ասացին,

թէ նա ոչ ոք չէ ընդունում։ Ես գրեցի նորան, և նա պատասխանեց ինձ, թէ այս րոպէիս պատրաստուելով նուիրել իւր անձը Աստուծուն, չէր նորան համարձակ ուշադրութիւն տալ աշխարհին. որ եթէ սիրումէի նորան, կը ղգուշանայի վըտովել նորան իմ ցաւերով։ Ես յանձնառութիւն արի։ «Բայց եթէ քո դիտաւորութիւնն է ներկայ պահանուիլ սեղանի մօտ իմ հանգիստաւոր ուխտագրութեան օրին, ապա բարեհաճիր սպասաւորել այն տեղ իբրև իմ հայր. այս պաշտօնը միայն արժանի է քո վստահութեանը, ասա միայն է, որ վայել էր մեր բարեկամութեանը և իմ խաղաղութեանը»։

Այս սաուն հաստատամուտ թիւնը որ Ամելիան ընդունում իմ բարեկամութեան վառուն ջերմութեանը, ձգեց ինձ սաստիկ յուզմունքի մէջ։ Երբեմն մօտ էի ես խնդայն վերադառնալու, երբեմն կամէի ես մնալ այն խորհրդով միայն, որ վըտովեմ նուիրանքը։ Դժուխքը հրապուրեց իմ մէջ այն մի խորհուրդ որով խոցելու էի իմ անձը նկեղեցւոյ մէջ և խառնելու իմ վերջին հառաչանքը այն ուխտերի հետ, որ խլու մէկին իմ բերիից։ Վանքի մայրապետը իմաց տուեց ինձ թէ պատրաստել են մի աթոռ արքեպարանութեան և հրաւիրուեցի ինձ գալ ներկայ պահանուիլ արարողութեանը որ պիտի կատարուէր վաղուան օրին։

Երեկոյեան լսեցի ես զանգակների առաջին ձայնը... Դէպ ի տան ժամը մի տեսակ մահու տանջապի մէջ քարշուեցայ ես դէպ ի վանքը։ ոչինչ կարող չէ լինել այնու հետև աղերսական, երբ որ մի մարդ հանդիպակաց էր պահանուիլ այդպիսի տեսարանի. ոչինչ կարող չէ այնուհետև լինել ցաւեցուցիչ, երբ որ մի մարդ իւր կեանքի մէջ ակնատես էր եղած դարան։

Հագին բազմութիւն ժողովրդի լցուցանուեցան եկեղեցին։ Ինձ տարան պէտ ի աթոռը արքարանի մէջ. ես խնդայն ծունր իմ խոնարհեցնում, դրեթէ առանց գիտելու թէ ուր էի, կամ թէ ինչ էի որոշել ես։ Արդէն սպասում քահանան սեղանի վերայ. յանկարծ լացվում խորհրդաւոր վանդակապատը և Ամելիան յառաջ է գալիս, աշխարհի բոլոր փառահեղութիւնքը զարդարուած։ Նա անպատմելի գեղեցիկ էր, նորա երեսի վերայ կար մի այնպիսի աստուածային բան, որ մի անակնկալ տեսութեան և զարմացքի շարժումն յառաջացրեց։ Ես յաղթուելով այդ սուրբ կնոջ փառաւոր ցաւից, նուաճվելով կրօնի մեծվայելչութեամբ, անհետացան իմ կատաղի խորհուրդները, իմ զրուութիւնս փախաւ ինձանից, ես ղգացի իմ անձս մի ամենակարող ձեռքով կապած, և փոխանակ հայհոյութեան և սպառնալիքի չգտայ իմ սրտի մէջ ոչինչ, բայց միայն խորին մեծարանք և խոնարհութեան հնազանդութիւն։

Ամելիան հանդստանում մի ամպհովանու տակ. նուիրագործ թիւնը սկսանում ճրագների լուսափայլութեան տակ, ի մէջ ծաղիկների և անուշահոտ թիւնների որ պիտի վայելչացնէին ողջակէզը։ Ընծայութեան աղօթքի րոպէին, քահանան հանից վերայից իւր բոլոր զարդարանքը, պահելով

միայն մի կտաւեայ պատմուճան, վեր ելաւ դէպ ի ամպերը և մի պարզ ու աղդու ճառախօսութեամբ նկարագրեց բաղդաւորութիւնը կուսի որ ընծայումէ իւր անձը Տիրոջը։ Երբ որ նա արտասանեց բառերս. «Նա բուրեց անոյշ հոտ որպէս խունկը որ այրվումէ կրակի մէջ». մի մեծ հանդարտութիւն և երկնային անուշահոտութիւնք ասես թէ տարածվումէին եկեղեցու մէջ. մարդ զգումէր իւր անձը իբրև թէ խորհրդաւոր աղաւնու թևերի հովանաւորութեան տակ, և դու կը կարծէիր տեսանել հրեշտակներ իջանելով սեղանի վերայ և բարձրանալով դէպ ի երկինք խնկահոտութեամբք և թագերով։

Վ.Հ.ահանան աւարտումէ իւր ճառը, դարձեալ հագնումէ իւր զարդերը և յառաջ է տանում նուիրագործութիւնը։ Ամէնքեան, օգնական լինելով նորան երկու պատանի կրօնաւորութիւք, ծունր է խոնարհեցնում սեղանի վերջին աստիճանի վերայ։ Այնուհետև դալիս են տանելու ինձ, որ լցուցանեմ հայրական պաշտօնքը։ Իմ դողդոջուն քայլերի շառաչիւնը սրբարանի մէջ, լսելով Ամէնքեան, մեռ է թալկանալու (սիրտը գնալու)։ Ինձ կանգնեցնումեն քահանայի կողքին, որ մատուցանեմ նորան մկրատը։ Այս րոպէիս զգումէմ ես իմ սաստիկ ախտերի դարձեալ բորբոքիլը. կատաղութիւնս կամի դուրս յարձակուիլ, երբ Ամէնքեան վերստին ժողովելով իւր արիութիւնը, ձգումէ իմ վերայ մի հայեացք որի մէջ կայ այնքան յանդիմանութիւն և ցաւ, որ ես դորանով ասես թէ կայծակից զարկուած, դէպ ի գետին եմ գլորվում։ կրօնը ստանումէ յաղթութեան պարծանքը։ Իմ քոյրս նպաստ առնելով իմ շփոթութիւնը, համարձակու թեամբ յառաջ է պարզում գլուխը։ Նորա փառաւոր մազերը ամենայն կողմից ցած են թափվում նուիրական երկաթի տակ. մի երկար հանդերձ ներքաթել կերպասից լինում է նորան աշխարհի զարդերի փոխանակ, առանց միանալու նորա գրաւիչ, սիրտ շարժող քաղցրութեանը. նորա ճակատի վրչտերը ծածկվումեն մի կտաւեայ կապոցի տակ, և խորհրդաւոր քօղը, մի կրկնապատիկ նշան կուսութեան և կրօնաւորութեան, զարդարում է նորա մերկացուցած գլուխը։ Երբէք այնպէս գեղեցիկ երևեցած չէր նա։ Ապաշխարողի աչքը բևեռած էր աշխարհի հողի վերայ, և նորա հոգին էր երկնքում։

Այլ Ամէնքեան դեռ ևս չէր հրատարակել իւր ուխտադրութիւնը. և աշխարհի համար մեռանելու, պիտոյ էր նորան ճանապարհ կատարել գերեզմանի միջով։ Իմ քոյրս տարածվումէ մարմարիոնների վերայ, նորա վերայ ծածկումեն մահու սիրոցը, չորս ճրագներ նշանակումեն դագաղի չորս անկիւնքը։ քահանան ուրարը վզին, գիրքը ձեռքին, սկսանում է ննջեցեալների պաշտօնը, պատանի կոյսերը յառաջ են տանում նորան։ Ո՜վ ուրախութիւնք կրօնի, ի՞նչպէս մեծ է քո զօր, բայց ի՞նչպէս ահաւոր։ Ինձ հարկադրել էին ծունր խոնարհեցնել այս տրտում տեսարանի մեռ։ Ցանկարծ մի խառնաշփոթ շշնջիւն դուրս է գալիս թաղման ծածկոցի տակից. ես թե-

քումեմ գլուխս, և հասանումն ականջիս այսպիսի զարհուրելի խօսքեր (որ ինձ միայն լսելի էին)· «Աստուածդ գթութեան, տէր ինձ, որ ես երբէք վեր չկենամ այս գերեզմանական հանգստարանից, և առատաձեռնիր քո բարիքը մի եղբօր, որ կցորդ չէ իմ յանցաւոր ախտին։

Ա՛յս, դադարից արձակուած խօսքերից լուսաւիպլվումէ առաջևս ահաւոր ճշմարտութիւնը. խելքս ցնորվումէ, վայր եմ ընկնում մեղու սանվանի վերայ, գրկախառնումեմ քոյրս և ձայն եմ արձակում։ «Ո՛վ պարկեշտ հարսն Քհսուսի Քրիստոսի, ընդունի՛ր իմ վերջին գրկախառնութիւնը մեղու պատնամանիքի և յաւիտենականութեան անդունդքի մէջ, որ արդէն բաժանումն քեզ քո եղբօրից։

Ա՛յս շարժումը, այս աղաղակը, այս արտասուքը չփոթումն արտրողութիւնը. քահանան դադարեցնումէ իւր գործը, կրօնաւորուհիքը փակումն վանդակապատը, բազմութիւնը ալէկոծվումէ և թափվումէ դէպ ի սեղանը. ինձ հեռացնումն ուշաբարձութեան մէջ։ Ի՞նչքան սակաւ շնորհակալ եմ նոցա, որ ինձ վերակոչեցին դէպ ի կեանք։ Դարձեալ բանալով աչքս, տեղեկացայ ես, որ նուիրագործութիւնը աւարտուած էր և թէ իմ քոյրս ընդունուած էր մի վանուն տէնդից։ Նա հրամայել էր ասել ինձ, որ պլևս չխնդրեմ տեսանել նորան։ Ո՛վ իմ կեանքի թշուառութիւն. մի քոյր պիտի փախչէր իւր եղբօր հետ խօսելուց, մի եղբայր պիտի երկիւղ կրէր իւր ձայնը լսելի կացուցանելով իւր քուերը։ Ես դուրս ելայ մենաստանից իբրև մի քաւարանից ուր բոցերը պատրաստումն մեզ դէպ ի երկնային կեանքը, ուր, որպէս դժոխքի մէջ, կորցրել էր մարդ ամենայն բան, բաց ի յոյսից։

Կարելի՛ է իւր հոգու մէջ գտանել կարողութիւնք ընդդէմ մի անձնական անբաղդութեան, բայց գտանել միւսի անբաղդութեան ակամայ պատճառը, այս ամենևին անտանելի է։ Վերահասու լինելով իմ քուեր ցաւերին, ես կարող էի պատկերացնել մեզով այն տառապանքը որ պիտի կրէր նա։ Անհետևանք բացայայտուեցան ինձ շատ բաներ որ ես կարողացել չէի հասկանալ· այս խառնուրդը ուրախութեան և տրտմութեան, որ Ամելիան ցոյց էր տուել այն րոպէին, երբ ուղևորվումէի ես դէպ ի Ճանապարհորդութիւն, այն հոգաբարձութիւնը որ արեց նա, փախչելու իմ մեծակայքից, երբ որ վերադարձած էի, և այնու ամենայնիւ այն տկարութիւնը որ երկար միջոց արգելք եղաւ նորան ընտրելու մի մենաստանական կեանք. անտարակոյս, այս անբաղդ աղջիկը միխիթարուել էր յուսով թէ առողջանալու է, Նորա մեռադրութիւնը առանձնանալու, ազատութիւնը նորընծայութենից, տնօրէնութիւնը իւր բոլոր գոյքի դէպ ի իմ օգուտս, ինչպէս խելքի մօտ է, յառաջացուցել էին այն ծածուկ նամակակցութիւնը որ գործ էր դրել նա, ինձ խաբելու։

Ո՛վ իմ բարեկամներ, այնուհետև խելամուտ եղայ ես թէ ինչ ասել էր արտասուք թափել մի ցաւի վերայ, որ չէր երևակայական։ Իմ ախտերը,

այնքան երկար ժամանակ լինելով անորոշ, այնուհետև կատաղութեամբ յարձակուեցան այս առաջին որսի վերայ։ Ես գոյ այո՛ մի տեսակ անակնկալ քաղցրութիւն իմ վշտիս լիութեան մէջ, և մի ծածուկ շարժմամբ ուրախութեան նկատեցի ես, թէ ցաւը չէ մի ախտ որ կարելի էր մնշել ու սպառել որպէս մի վայելք։

Ես կամեցած էի թողուլ աշխարհը, դեռ ևս Ամենակարողից հրաման չտացած. այս մի մեծ յանցանք էր. Աստուած ուղարկել էր ինձ Ամելիան, ինձ փրկելու և պատժելու համար միանգամայն։ Այսպէս, ամենայն մեղապարտ մտածութենից, ամենայն յանցաւոր գործից ծնանումն անկարգութիւնք և վատաղդութիւնք։ Ամելիան խնդրումբ ինձանից ապրել, և ես նորան պարտական էի շատ բան, քան թէ կարող էի ծանրացնել նորա ցաւերը։ Այլև (մի օտարօտի՛ բան) մեռանելու ցանկութիւն չունէի ես սկսեալ այն օրից, երբ աստուածութեամբ վատաղդ էի։ Իմ վիշտս զարձել էր մի զբաղումն, որ լցուցանումբ իմ կեանքի բոլոր րոպէքը. այնքան ի բնէ շաղախուած է իմ սիրտը տաղտկութեամբ և թշուառութեամբ։

Ինուհետև յանկարծ որոշեցի ես իմ կեանքը պլպտել. ես յանձն առայ թողուլ Եւրոպան և անցանել դէպ ի Ամերիկա։

Այն իսկ րոպէին Բ... նաւահանգստումբ պատրաստումէին մի նաւ ուժողով ուղարկելու դէպ ի Լուիզիանա. ես կարգաւորեցի գործը նաւապետներից մինի հետ. ես իմ խորհուրդս իմաց տուեցի Ամելիային և զբաղուեցայ իմ ուղևորութեան պատրաստութեամբք։

Իմ քոյրս մնտեցած էր մահու գրանը. բայց Աստուած, որ նորան սահմանել էր կոյսերի առաջին պսակը, չկամեցաւ այնքան շուտով հրաւիրել նորան առ ինքը. նորա չարչարանքի հանդէսը այս աշխարհումն երկարացաւ։ Քաջազնուհին կրկին անգամ ներս մտանելով կեանքի փշալից ասպարէզի մէջ, պլուխը թեքած խաչի տակ, քաջութեամբ յառաջ խաղաց հանդիպելու ցաւերի, ոչինչ չտեսանելով, բայց միայն պատերազմի մէջ յաղթութիւն, և տարապայման վշտերի մէջ փառքի անվախճան մեծութիւնը։

Ա՛ճառումը այն փոքրիկ գոյքի որ մնուէր ինձ, որ և թողեցի եղբօրս, երկար պատրաստութիւնքը ուղեկից նաւերի, հակառակ հողմերը երկար միջոց յետ ձգեցին ինձ նաւահանգստումն։ Ամենայն առաւօտ երթուելի տեղեկանալու Ամելիայի որպիսութեանը, և ես միշտ վերադառնումէի նոր շարժառիթներով զարմացքի և արտասուքի։

Ես անգադար թափառումէի մենաստանի չորս կողմով, որ կառուցած էր ծովեղերի վերայ։ Ես շատ անգամ փոքրիկ վանդակապատ պատուհանի մօտ, որ նայումէր դէպ ի մի անապատ ծովախին, նկատումէի մի կրօնաւորուհի նստած մտախոհ կացութեան մէջ. նա երազումէր երաշխեր, նայելով ովկիանոսի վերայ, ուր երևումէր որ և իցէ նաւ, սասպիկ վազելով դէպ ի երկրի ծայրերը։ Շատ անգամ, լուսնի փայլողութեան տակ վերստին տեսայ

նոյն կրօնաւորուհին նոյն պատուհանի վանդակապատի մօտ. նա զննումէր ծովը լուսաւորուած գիշերի աստղից և ասես թէ ականջ էր դնում աղմկայոյզ ալիքներին որ ախորժաթեամբ ջաղջախվումէին անապատ ծովեզերքի վերայ։

Ես կարծումէի դեռ ևս լսել այն զանգակի ձայնը որ գիշերային միջոցում կոչումէր կրօնաւորուհիքը դէպ ի հսկողութիւն և աղօթք։ Երբ որ հնչումէր ծանրութեամբ և կուսանքը լռութեամբ դիմումէին դէպ ի Ամենակարողն սեղանը, ես վազումէի դէպ ի մենաստանը. այն տեղ, պարսպի ոտքումը լսումէի ես մի սուրբ մտաւորական յափշտակութեան մէջ երգերի վերջին ձայները որ տաճարի կամարների տակ խառնվումէին ալիքների թոյլ շառաչիւնի հետ։

Ես չգիտեմ, թէ ինչպէս այս բոլոր բաները, որ պիտի սնուցանէին իմ ցաւերը, դորա հակառակ բթացնումէին նոցա սուր փուշերը։ Իմ արտասուքը ունէին աւելի փոքր դառնութիւն, երբ որ թափումէի նորանց ապաւաժների վերայ և հողմերի մէջ։ Իմ նոյն իսկ վիշտը իւր անսովոր բնութեամբ կրումէր իւր հետ փոքր ինչ բժշկական դեղ. մարդուս ախորժելի է մի անսովոր բան, թէև դա լինէր այն մի վատաբաղդութիւն։ Սորանից յղացաւ իմ մէջ գրեթէ յոյս, թէ իմ քոյրս ևս չէր լինելու այնքան թշուառ։

Մի նամակ, որ ես ստացայ նորանից ուղևորութենից յառաջ, ասես թէ հաստատումէր իմ կարծիքը։ Ամենևին ողբումէր քնքշութեամբ իմ ցաւս և հաւատացնումէր ինձ, թէ ժամանակը կը թեթևացնէ նորա ցաւը։ «Ես անյոյս չեմ իմ բաղդաւորութենից, ասումէր նա։ Նոյն իսկ տարապայման ընծայաբերութիւնը, այժմ, երբ որ դա կատարուել է արդէն, պատրաստումէ ինձ փոքր ի շատէ խաղաղութիւն։ Իմ ընկերակից աղջիկների պարզութիւնը, նոցա ուխտերի մաքրութիւնը, նոցա կեանքի կանոնաւորութիւնը, ամենայն բան թափումէ մեղմիչ բալասան իմ օրերի վերայ։ Երբ լսումեմ ես փոթորիկների թնդիւնը և ծովային թռչունը գալիս է ղարկելու թևերը իմ պատուհանիս, ես, խղճալի աղաւնիս երկնքի, մտածումեմ այն բազդաւորութեան վերայ, որ գտել էի մի պատսպարան փոթորկի երեսից։ Այս տեղ է ահա սուրբ լեառնը, այն վերհամբարձ կատարը, որ տեղից լսում մարդ երկրի վերջին աղաղակները և երկնքի առաջին ներդաշնակութիւնքը. այս տեղ ահա կրօնը քաղցրութեամբ շողումէ մի զգացող հոգի. ամենատաժտիկ սիրակցութիւնների փոխանակ դնում մի տեսակ հրաշորհրդ պարկեշտութիւն, որի մէջ միաւորած են սիրող կինը և կոյսը. նա մաքրումէ հառաչանքը, նա յեղափոխումէ անցաւոր բոցը դէպ ի մի անապական բոց. նա աստուածայնաբար խառնումէ իւր հանդարտութիւնը և իւր անմեղութիւնը այն մեծագործ պղտորութեան և ախտասիրութեան հետ մի սրտի մէջ, որ խնդրումէ հանդստանալ, և մի կեանքի մէջ որ առանձնացել էր։

Ես չգիտեմ, թէ երկնային տեսչութիւնը ինչ է սահմանել ինձ, և թէ արդեօք կամեցած էր նա աղղել ինձ, թէ փոթորիկները պիտի ճանապարհակից լինէին ինձ ամենայն տեղ: Հրամանը տուած էր նաւերի ուղևորութեան համար. արդէն շատ նաւեր վերացուցել էին առագաստները արեւամտի միջոցին. ես տեղաւորվել էի վերջին գիշերը անցուցանելու ցամաքի վերայ, որ գրեի Ամելիային իմ հրաժարական նամակը: Դէպ ի կէս գիշեր, երբ որ ես այս գործով պարապած էի և իմ արտասուքով թրջումէի թուղթս, հողմերի աղմուկը հասանումէ ականջիս: Ես լսումեմ, և փոթորկի մէջ որոշումեմ խուովութեան թնդանօթների զարկերը որ խառնվումէին մենաստանական զանգակի ողբաձայն հնչողութեան հետ: Ես վազումեմ դէպ ի ծովեզերը, ուր ամենայն ինչ անապատ էր, ուր և ոչինչ բան լսելի չէր բաց ի ալիքների մռնչիւնից: Ես նստումեմ մի ապառաժի վերայ: Մի կողմից ձգվումեն կայծակնափայլ կոհակները. միւս կողմից տխուր պարիսպը մենաստանի անհետանումէ խառնակութեամբ երկնքի պարածութեան մէջ: Մի փոքրիկ լոյս երևումէր վանդակապատ պատուհանումը: Ա՛յս դո՛ւ էիր, ով իմ Ամելիա, որ տարածուած խաչելութեան պատկերի առաջև, աղաչումէիր փոթորիկների Աստուածը խնայել քո անբաղդ եղբօրը: Մրրիկը ծովի վերայ, հանդարտութիւնը պատսպարանի մէջ. մարդեր, ջաղջախուած ծովածպուերի վերայ, մի ապաստարանի ոտքումէ, որ ոչինչ բան կարող չէ վըդովել. միւս կողմից անվերջ երկայնութիւնը մի խոշ պարսպի. նաւերի տարուբերուն լապտերները, վանքի անշարժ լուսատու աշտարակը. նաւաղնաց մարդու պատահարքի անհաւատութիւնը, վեստալեան կոյսը մի օրի մէջ իւր կեանքի բոլոր օրերը գիտեցող. միւս կողմից մի պղպիսի հոգի, որպիսի քո հոգին է, ով Ամելիա, փոթորկայոյզ որպէս ովկիանոսը. մի նաւաբեկութիւն աւելի ահարկու քան թէ ծովագնացինը. այս բոլոր պատկերները տակաւին խոր տպաւորած են իմ յիշողութեան մէջ: Ով արև այս նոր երկնակամարի, այժմ վկայ իմ արտասուքիս, ով արձագանք ամերիկեան ծովեզրի, որ կըրկնումէք Րենէի խօսքերը, ահա այս ահարկու գիշերից յետոյ լուսանալի օրն էր, որ ես Թիվին տուած իմ նաւի դղեակին, տեսայ իմ հայրենի աշխարհի յաւիտեան չքանալը իմ աչքից: Ես երկար միջոց զննումէի ծովեզրի վերայ իմ հայրենիքի ծառերի վերջին օրօրանքը, և մենաստանի կատարքը որ խոնարհումեն դէպ ի հորիզոն»:

Երբ որ Րենէն աւարտումէր իւր պատմութիւնը, նա դուրս հանեց ծոցից մի թուղթ և տուեց Հայր Սուէլին. յետոյ ընկնելով Շաքտասի գիրկը և ճնշելով հեծեծանքը, թող տուեց միսիոներին կարդալ այն նամակը որ տուել էր նորան:

Ա՛յս նամակը ստացած էր մենաստանի մայրապետից... նա պարունակումէր իւր մէջ պատմութիւնը, թէ ինչպէս էին եղած նորա քոյր Ամե-

լեայի, Ողորմաստրութեան կրօնաւորուհու կեանքի վերջին րոպէքը, որ մեռած էր որպէս զոհ իւր ջերմեռանդութեան և քրիստոնէական սիրոյ, հոգաբարձու լինելով իւր ընկերակից կուսանքին, որ հիւանդացած էին մի վարակիչ ցաւով։ Բոլոր միաբանութիւնը անմխիթար էր, և Ամելիան համարումէին այն տեղ մի սուրբ կին։ Մայրապետը յաւելացնումէր, թէ ամբողջ երեսուն տարի լինելով այս մենաստանի մեծաւոր, երբէք չէր տեսել մի կրօնաւորուհի այսպիսի հեզ և այսպիսի միատեսակ ընաւորութեամբ, և ոչ մինը, որ եղած լինէր այնպէս զոհ, հրաժարուելով աշխարհի ցաւերից։

Հ՚աքտասը գրկախառնեց Բենէին. ալևորը լայ էր լինում. «Իմ զաւակ, ասաց նա իւր որդուն, ես կը ցանկանայի որ Հայր Օբրին լինէր այս տեղ. նա հանումէր իւր սրտի աղբիւրից մի անպատմելի խաղաղութիւն, որ հանգարտեցնելով փոթորիկները, այնու ամենայնիւ չէր անծանօթ նոցա հետ. դա էր մի լուսին փոթորկային գիշերի մէջ. թափառական ամպերը կարող չեն դորան առնուլ տանել իւրեանց ընթացքի հետ. այդ խաղաղութիւնը մնքուր և անփոփոխելի հանգարտութեամբ յառաջ է դիմում ամպերի վերայ. աւա՜ղ, իմ մասին պիտի ասեմ, որ ամեն բան վրդովումէ ինձ և քարշում տանումէ իւր հետ։

Մինչև այժմ, հայր Սուէլը, առանց որ և իցէ բառ բերանից հանելու, մի ծանր դէմքով լսել էր Բենէի պատմութեանը։ Նա իւր մէջ կրումէր ծածուկ մի կարեկից սիրտ, բայց արտաքուստ ցուցանումէր մի անմեղկելի բնաւորութիւն. Աշխեմի փափկասրտութիւնը ստիպեց նորան դուրս գալ իւր լռութենից։

«Ոչինչ բան, ասաց նա Ամելիայի եղբօրը, ոչինչ բան այդ պատմութեան մէջ արժանի է այն կարեկցութեանը որ քեզ ցուցանումն այս տեղ։ Ես տեսանումեմ քո մէջ մի յամառ երիտասարդ, որ անհաւան է ամենայն բանի, որ և գլուխը դուրս է հանել ընկերութեան պաշտօնեների լծի տակից, որ անձնատուր լինի անօգուտ երազամոլութիւնների։ Ոչ, պարոն. մի երեսդ մարդ չէ նա դեռ ևս, ով որ նկատումէ աշխարհը մի առելի կերպարանքի տակ. ոչ ոք առում չէ մարդիկը և կեանքը, բայց միայն նա, որ չունի բաւական հեռատեսութիւն։ Ընդարձակիր մի փոքր աւելի քո հայեացքը և դու շուտով վերահասու կը լինիս, թէ այդ բոլոր ցաւերը, որոնց վերայ դու գանգատումես, ամենևին ոչինչ են։ Բայց քանի՜ ամօթ, որ դու կարող չես մտածել այն մի հատիկ ստոյգ անբաղդութիւնը քո կեանքի, առանց ամօթապարտուելու։ Ամենայն մաքրութիւն, ամենայն առաքինութիւն, ամենայն կրօն, բոլոր պսակները մի սուրբ կնոջ հաղիւ թէ տանելի են կացուցանում քո վշտերի լոկ գաղափարը։ Քո քոյրը քաւել է իւր սխալանքը, բայց եթէ հարկաւոր էր ասել այս տեղ իմ կարծիքը, ապա երկիւղ ունիմ, մի գուցէ այն խոստովանութիւնը, որ դուրս էր հնել գերեզմանի խորքից, մի

զարհուրելի արդարութեամբ վհատված լիներ և քո սիրտը։ Դու ինչ ես շինում մենակ այս անտառների խորքի մէջ սպառելով քո օրերը, անիւթ առնելով քո պարտականութիւնը։ Սուրբերը — կ'ասէիր դու ինձ — թաղել են իւրեանց անձը անապատների մէջ։ Նորա ապրումին այն տեղ արտասուելով և իւրեանց ախտերը շինջուցանելու համար գործ էին գնում այն ժամանակը որ դու կորուսանում ես, գուցէ բորբոքելու քո ախտերը։ Ով մեծամիտ երիտասարդ, որ կարծում ես թէ մարդս ինքն իւրեան բաւական էր։ Առանձնութիւնը միայնակար է այն մարդուն, որ նորա մէջ ապրում չէ Աստուածոյ հետ։ Նա կրկնապատկում հոգու կարողութիւնքը, մինչ նոյն միջոցին խլում նորանից ամենայն նիւթ, որով կարող էր նա իւր անձը վարժել։ Ով որ ստացել է զօրութիւնք, պարտական է դորանց նուիրել իւր ընկերի սպասաւորութեանը. բայց եթէ նա անգործ է թողում այդ զօրութիւնքը, դորա համար նախ պատժվում նա մի ծածուկ թշուառութեամբ, և վաղ կամ յետոյ երկնային տեսչութիւնը ուղարկում նորան մի զարհուրելի պատուհաս»։

Այս խօսքերովս վհատված րաբին, բարձրացրեց իւր խոնարհնցուցած գլուխը Շաբտասի կուրծքից։ Կայր Սաշէմը սկսաւ ժպտիլ և նորա շրթունքի ժպտումը որ այլ ևս չէ զուգաւորվում նորա աչքի ժպտման հետ, ցուցանում մի խորհրդաւոր ու երկնային բան։ «Իմ որդի, ասաց նորան Աթալայի սիրողը. նա խօսում մեր հետ խստութեամբ. նա ուղղում և ալևորը և երիտասարդը, և ստոյգ է նորա խօսքը։ Այո՛, պիտոյ է քեղ հրաժարուիլ այս արտականոն կեանքից որ լի է միայն հոգսերով. չկայ ոչ մի տեղ բաղդաւորութիւն, բայց միայն սովորական ճանապարհների մէջ։

Մի օր Մեշասեպէ գետը, տակաւին շատ մօտ լինելով իւր աղբիւրին, ձանձրացաւ այն բանից, որ ինքը մի լոկ առու էր պայծառ ջրով։ Նա պահանջում ձիւն սարերից, ջուր հեղեղատներից, անձրև փոթորիկներից. նա դուրս է գալիս իւր եզերաստհմանքից և ապականում իւր գեղեցիկ շրջակայքը։ Ամբարտաւան առուն սկզբում հաճ ու հաւան է իւր կարողութեանը, բայց տեսանելով որ ամենայն ինչ անապատանում նորա անցքի վերայ, որ նա հոսում բարձի թողի արած առանձնութեան մէջ, որ նորա ջուրերը միշտ պղտորուած էին, այնուհետև նա ցաւեցաւ իւր կորուսած խոնարհ ձորի վերայ, որ փորել էր նորա համար ընութիւնը, ցաւեցաւ այն թռչունների, ծաղիկների, ծառերի և առուների վերայ, որ միանդամ եղած էին նորա մեղմ ընթացքի համեստ ընկերակիցք։

Շաբտասը դադարեցաւ խօսելուց, և լսելի եղաւ ձայնը Փլամինգօ թռչնի, որ առանձնացած Մեշասելէի եղէգնաբոյսերի մէջ, գուշակումեր մի փոթորիկ օրի մէջ։ Երեք բարեկամքը վերստին ուղևորուեցան դէպ ի իւրեանց խուղերը. րաբին քայլումեր լռութեամբ, աղօթող միսիօների և կայր

Սաշեմի մէջ տեղւ Ասումեն, թէ նա երկու ալևորների կողմից հարկադրուած, վերադարձաւ դէպ ի իւր ամուսինը, բայց չեղաւ բաղդաւոր նորա կենակցութեամբ։ Փոքր ինչ յետոյ, Շաքտասի և Հայր Սուէլի հետ միասին մեռաւ նա այն կոտրածի մէջ որ հասաւ Գրանսիացոց և Նաչէզների ազգին Լուիզիանայի մէջ։ Մինչև այժմ ցուցանումեն մի ապառաժ սար, ուր նա գնուեր նստելու արևամուտի միջոցին։

ՎԵՐՋ ՐԵՆԷԻ։

Ս. Նալաբեանց։

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՐՄԱՏԱԿԱՆ ՆԻՒԹԵՐԸ։

ՑԵՂ, ԵՒ ԱԶԳ, ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ։

Վերդաստանը տանումէ մէզ դէպ ի ցեղը և ընկերութիւնը։ — Նորա մէջ, մտածող փիլիսոփայի համար կան երկու ստուգապէս շատ մօտ կապակից սկզբունք. բնական միութիւնը արիւնի և սրտի վկայութեամբ և օրինաբար հաստատուած կապակցութիւնը։ Նոյն արմատական նիւթերը կերպաւորուած են Ազէ և Թէօօրիէ։ Եւ ամենայն ընկերական կարգի հիմք գտանելումէ արդէն գերդաստանի մէջ իրագործուած, այսինքն աշխատութեան բաժանումը և սեփականութեան ապահովութիւնը, որ նոյնպէս իբրև հասարակաց գոյք ստանումէ բարոյական իմաստ։

Նոյն իսկ Ամանիւն սահմանադրութեամբ արած է արդէն ամենակարևոր քայլափոխը. կոյր սեռական ձգտողութիւնը չափի ու սահմանի տակ դնելով, որ լինի գործունեայ ամուսնութեան մէջ միայն, անհատները (անբաժանելի անձնաւորութիւնքը) ստանումեն որոշած փոխադարձ իրաւունք և պարտականութիւնք, և բնութեան իմաստուն տնտեսութիւնը լինումէ օրինակ և կանոն ընկերական բարոյագործութեան և ներքին կառավարութեան — բաժանումն և պատշաճաւոր զուգախառնութիւն պաշտօնների։

(Այս պատճառով վաղեմի առասպելները մի տեսակ կապակցումեն Ամուսնութեան սահմանադրութիւնը երկրագործութեան արուեստի հետ)։

Ըստ հին ժամանակներում արդէն գտանումենք գերդաստանը որոշուած և միաւորուած ըստ ցեղերի։ Ցեղական կեանքը կապակցումէ մարդիկը բնական միութեան, արենակցութեան զգացողութեամբ, որ, ինչպէս ամենայն տնկակից ազգեցութիւն, շատ աւելի զօրաւոր է բնութենական մարդու քան թէ բարոյագործուածի մէջ, և ամեն մինին, իբրև առաջին կապակցող հնար, նոյնքան ևս աւելի հարկաւոր է։ Սորա հակառակ, այն տեղ ազատ ձգտողութիւնը գուցէ թէ շատ հեշտ հեռանումէ աչքի տակից, որովհետև ամեն մի ցեղ որքան ցած աստիճանի վերայ գտանելումէր բնութեան մէջ, նոյնքան ևս ցուցանումէ սակաւ սեփական զանազանութիւնք, նոյնքան ևս սակաւ խորադիմայութիւնք։

Յեղական միութենից բնականապէս յառաջացած ներհակութիւնը է թշնամութիւնը դէպ ի օտար ցեղեր։ Հին կրօնական յիշատակարանները, յատկապէս Հին կտակարանը, քարոզումն ցեղական ատելութիւն իբրև պատուէր իւրեանց ազգային աստուածների։ Աստուծոյ նուիրուած քահանաների բերանով հարիւրաւոր անգամ պահանջվում ոչնչացնել թշնամիքը, ընաջինջ առնել օտարները։ Զուգաւորութիւնը այլազգիների հետ համարվում անսուրբ, և արգելուած է որպէս պղծութիւն։ Հասկանալի է, որ ատելութիւնը և թշնամութիւնը դէպ ի օտարները ոչ այնքան յառաջանում դաւանաբանական աղբիւրներից — որովհետև այն գաղափարը թէ «Մի եկեղեցու մէջ միայն կարելի էր երանութիւն գտանել» ընտանի չէր Հնութեանը — որքան մանաւանդ թէ ներհակութիւնը պահպանելու համար, որ դորանով ամրանար և քաջալերուէր գիտակցութիւնը և մաքրութիւնը ներքին ցեղական կապերի։

Ուրեմն ցեղական կեանքը հասուցել է առաջին հարուածը բռնակալ անձնապաշտութեանը — բարբարոսութեանը, նա սանձահարել է ամենեցուն պատերազմը ընդդէմ ամենեցուն. գազանը մարդուս մէջ դարձուցել է երեսը դէպ ի դուրս և թողել է մարդու ձգտողութեանը դէպ ի միութիւն, անխոով գործ կատարել ներսումը։ Այս, նոյնքան եւս հարկաւոր էր, որքան առաւել անձնապահպանութեան պարտականութիւնքը, որ յետոյ մի մասնով անցան թագաւորութեան թիկունքի վերայ, այն ժամանակում դեռ եւս ծանրանում էին գերդաստանի և ցեղի վերայ, զոր օրինակ, ապահովութիւնը, վրէժխնդրութիւնը և այլն։

Յեղական կեանքին համեմատվում ժողովրդի ընդհանուր ձևակերպութիւնը, ազգին թագաւորութիւնը — ցեղը չէ տակաւին ազգ. ժողովուրդը չէ տակաւին թագաւորութիւն։

Մինչև զանազան արհեստից ցեղեր կը բաղկացնէին ազգ, պիտոյ է արհեստկցութեան ներքին, գործողութեան վերայ հիմնուած համակցութիւնը ընդունի, և այդ կորուսած ցեղական կեանքի փոխանակ ներս է մտանում մի գերագոյն միութիւն գիտակցութեան, մի համաշխարհական միութիւն։ Այնուհետև հասարակաց ծագմանից, պատմական պատահարների և բոլոր անցած գնացածի հասարակութեամբ հետևում անբաժանելի համակցութիւնը կրթութեան և լեզուի։ Լեզուն է գլխաւոր ցուցակութիւնը ազգային կրթութեան. ինչքան հետատարած է լեզուն, այնքան հետատարած է և ազգը. նորա սահմանքը են ազգային սահմանք։ — Բայց լեզուն և ազգային կրթութիւնը այն ժամանակ միայն ստանում են ամենևին որոշ և վճռական բնաւորութիւն, երբ մի ազգի կոչումը աշխարհի հրապարակի մէջ, նորա կացութիւնը և լցուցանելի պաշտօնը որոշուած է արդէն, և դորա համար պիտոյ էր ենթադրել, որ ազգը իւր համար տուն ու տեղ ունէր մի որոշ աշխարհում, որոշ կլիմայական ազդեցութիւնների տակ և որոշ սահմանների

մէջ. մի խօսքով, որ նա թափառական կեանքը փոխել էր հաստատուն բնակարանների հետ: Մինչև այդ ժամանակը, ընկերութիւնը իւր ներսում որպէս և դէպ ի դուրս պիտոյ է եղած լինի միայն անչափ շատ չքաւոր. մինչև այն ժամանակը ընկերական կապերը կարող էին միայն լցուցանել առաւել անմիջական պիտոյքը: Բայց մտաւորութեան չքաւորութիւնը ծածկած էր հաւատի արտաքին փառահեղութեամբ և ծէսերի խաբէական փայլողութեամբ:

Բայց աւելի յետոյ ժամանակում չեղոք փորձնը ստանում էր իրրև պէտք պետական մի աւելի վերին յայտարար նշան և մի աւելի ազնիւ խորհուրդ. Հպարենասիրութիւնը ստանում էր աշխարհաշինական պարունակութիւն իրրև թագաւորութեան գիտակցութիւն:

Ամանապիսի մտքով որոշելի են միմեանցից ցեղ և թագաւորութիւն:

Ազատութիւն ասելով հասկանում ենք այն առօրեայ հարկ լցուցանող թագաւորութիւնը, այն աղքատ ու չքաւոր մտացածին ստեղծագործութիւնը հատուկտոր կարգերի, որոշած, առանձին խորհուրդներով, այն պակասաւոր խաղաղութիւնը աշխարհի, որ հնարուած էր, անհատների օգտակարութիւնքը, ինչքան կարելի է, հեռու բաժան պահելու միմեանցից, անհատների մասնաւոր կացութիւնքը պաշտպանելու, մի փոխադարձ մօտաւորութիւն կամքերի, որ հաշտվում են միմեանց հետ, չկործանուելու համար, շատ շատ, մի փոքրիկ կտոր հասարակաց կառավարութեան: Այդպիսի, առօրեայ հարկ լցուցանող թագաւորութիւնքը չեն ծնանում իսկապէս գաղնագրութեամբ, այլ յետոյ զգեստաւորվում են նորա կերպարանքով: Այսպէս են ահա սկզբնաւորութիւնքը ամենայն թագաւորութեան:

Այդ հակառակ, թագաւորութիւնը է մի անգժրելի և անքակտելի միութիւն, մի յառաջադէմ փոխադարձութիւն օգուտների, որ օրէ օր աւելի զուգահաւանվում են միմեանց հետ և պայմանաւորում են միմեանց: Նա է վախճանական քայքայումն եսականութեան և ոչ թէ միայն սրտի և սիրոյ միջնորդութեամբ, այլև խելքի և բանականութեան զօրութեամբ:

Ազատութիւնը է միութիւն շատ անհատների այս և այն խորհուրդը լըցուցանելու համար. թագաւորութիւնը է ինքն ըստ ինքեան ժ, և նոյն ինքն դարձեալ, անհատների դէմուդէմ կանգնած է իրրև մի անձնաւորութիւն, իրրև մի ամբողջութիւն: Հասարակութիւնը որպէս և ցեղը բաղկանում է զերադասաններից, թագաւորութիւնը ազատ անհատներից որոնց միութիւնը մտաւորաբար ըմբռնվում է իրրև յատկութիւն: Առօրեայ հարկ լցուցանող թագաւորութեան միաւորութիւնը վերաբերվում է դէպ ի այնպիսի օգուտներ որ կարող են նոյնպէս բաժան բաժան ոգի վերայ ծնալ, զոր օրինակ, որսորդ և վրանաբնակ ցեղերի մէջ չէ տեսանվում ոչինչ օրինաւոր բաժանումն և կապակցութիւն աշխատութեան. ամեն մինը կարող է իւր համար որսալ և կողոպտել, թէպէտ ոչ այնքան լաւ, ինչպէս ընկերութեամբ: — Բայց թա-

գաւորութեանական կեանքը գոյանում մի և նոյն ժամանակում, երբ վաստակասիրութիւնը հասել էր մի այնպիսի յառաջադիմութեան աստիճանի, որ մասնացոյց է առնում վաճառների փոխանակութիւն և փոխադարձութիւն, ամենայն տեսակ վաստակների կապակցութիւն միմեանց հետ, և քաջալերում դէպ ի ներդաշնակութիւն։

Ազօրեայ հարկ լցուցանող թագաւորութեան բարբարոսութիւնը յաղթահարվում բանական թագաւորութեան մէջ. բայց հասարակութեան կեանքը դարձեալ ընդունում իւր վերայից դուրս հանած ծածկոցը, և իւր, անձնական ազատութեանը համեմատ, արհատական նիւթերից կերպաւորում մի հարկաւոր, բայց երկրորդական գործարան թագաւորութենական կեանքի։ Հասարակութիւնը որպէս թագաւորութիւն և թագաւորութենից դուրս այնքան ևս անընդունակ է ազատութեան, որչափ (նահապետական) գերդաստանը որ կամի լինել և լիովանդակել ամենայն բան. բայց հասարակութիւնը թագաւորութեան մէջ և թագաւորութեան տակ հարկաւոր է նոյա օրինապատշաճ անտեսութեան համար։

Ազէտ է մի անդժրելի բնական ահաբեկութիւն հաստատ սահմանների մէջ, որ համեմատ են նորա տեղական տարածութեանը։ Թագաւորութիւնը պիտի լինի մի օրինապատշաճ ապահովութիւն, նա պիտի լինի համերկնութիւնը. բայց այս կախելութիւնը չպիտի լինի արտաքին, մի հարկադրանք, այլ մանաւանդ, ինչպէս բնութեան մէջ, ազատ և չէզոք հաստատութիւն օգտակարի։

Թագաւորութեան մէջ գտանում անհատը իւր ազատութիւնը և գերդաստանը իւր կարգը, ցեղը գտանում իւր յեղափոխութիւնը դէպ ի ազգ, ազգը իւր ապահովութիւնը թագաւորութեան հողի վերայ։

Ազգայնութիւն (nationalité), մարդկայնութիւն (humanité), հայրենասիրութիւն (patriotisme) և աշխարհաքաղաքացութիւն (cosmopolitisme)։

Այժ իւրահնդիր է և հշնամասէր. նա կամակորուած է մի փակ կացութեան մէջ. սորա հակառակ Ազգը հիմնուած է այն գիտակցութեան վերայ թէ համաշխարհական անցքերով կապակից էր մարդկութեան յառաջադէմ կերպարանագործութեան հետ։ Այսպէս, ազգային զգացողութեան միւս երեսը յուցանում մեզ աշխարհաքաղաքացութիւն, ազգային իրաւունքը գտանում իւր լրագործութիւնը ազգերի իրաւունքի մէջ։ Պատճառ, մի առանձին ազգ այն ժամանակ միայն հասանում համաշխարհական և մարդկային իրաւունքի, երբ բոլոր ազգերը ընդհանրապէս և փոխադարձաբար ընդունում միմեանց, ուրեմն երբ այդ ներհակութիւնքը դրած են միմեանց մօտակայքում։ Արդարև թագաւորութեան գոյութիւնը և ամրութիւնը հիմնաւորուած է նախ և առաւելապէս քաղաքացոյց ընդհանուր անձնա-

զգացութեան վերայ, ուրեմն և անհատների բարեկեցութեան վերայ, որ ապահոված էր թագաւորութեան մէջ։ Եւ այսպէս հպատակութիւնը աւելի, քան թէ օրէնքը է թագաւորութեան մշտնջենաւոր տևականութեան և նորա ազատութեան երաշխաւորը։ Հայրենասիրութիւնը, այս տիրապէս քաղաքական առաքինութիւնը դրած է այն զգացողութեան մէջ, որով քաղաքացին իւր անձը ամենին ստորադրումէր թագաւորութեան ամբողջութեանը, որ և տալիս է նորան վստահութիւն բոլորովին անձնանուէր լինելու թագաւորութեանը որպէս իւր յատուկ աւելի վերին գոյութեանը (մի հռչակաւոր ապացոյց է կատոն հռոմայեցին որ հասարակապետական ազատութեան կործանուելու միջոցին, գլուխը մահու տուաց, որովհետև կարող չէր ապրել առանց հասարակապետութեան)։

Ինչպէս թագաւորութիւնը ազգի վերայ, նոյնպէս հայրենասիրութիւնը ազգային զգացման վերայ ունի իւր բնական հիմնադրութիւնը։ Ազգային զգացումը է անհատի կենդանական կապակցութիւնը բոլոր ազգի պատմական ու բնական որպիսութեան հետ, — բոլոր ազգի, որի անդամն է նա։ Առանց ազգային զգացման, հայրենասիրութիւնը մի դատարկ վերացական ըմբռնումն է, մի հրամայողական խօսք օրէնքի, իսկ առանց հայրենասիրութեան ազգային զգացումը է մի լուկ թուլութիւն սրտի, առանց բարոյական խորհրդի, առանց մեծ ազդեցութեան պրակական հոգիների վերայ և պրակական հոգիների օրինակով։

Հին ժամանակներումը ցեղական զգացողութիւնը եղել է գերակշիռ, հին հասարակապետութիւնների մէջ հայրենասիրութիւնը, միջին դարերումը մի ընդհանուր, առանձնացուցիչ անհատականութիւն։ Սկսեալ հռոմէական պապի ընդհանուր իշխանութեան ցած գլորելուց, յառաջացել է ազգային գիտակցութիւն, ազգային խիղճը (народное сознание)։ Բայց ազգային զգացողութիւնը և հայրենասիրութիւնը պարտ են ներգործել միասին որպէս թագաւորութիւն և ազգ, որպէս հայր և մայր, որպէս բնական կեանք և հոգևկան զօրութիւն. այնուհետև կը յառաջանայ ուրախ թիւն կեանքի վերայ և քաջութիւն մեռանելու համար։

Եթէ ազգային զգացումը և հայրենասիրութիւնը կարող են համարուիլ նպատակ երաշխաւորութիւնքը մի հաստատաց անտեսութեան, ապա նորա նիւթական երաշխաւորութիւնքը պատնվումեն քաղաքացիների ազատութիւնը և ամբողջութեան միութիւնը պաշտպանող սահմանադրական օրէնքների մէջ։ Հարստահարութեան և ինքնահաճ կառավարութեան տակ կարող չէ քաղաքացին սրտի վկայութեամբ նոյնացնել իւր անձը թագաւորութեան գոյութեան հետ, մինչ դէպ ի ազատութիւն զարթեցած անձնագոյութիւնը յառաջ կամ յետոյ կը հնարաւորէ ազատ սահմանադրական ձևեր։ Որ թագաւորական կեանքի նիւթական երաշխաւորութիւնքը պատնվումեն, այն տեղ կարող չեն պակասել երբեք անձնականքը. երկուքը

ընթանումն տիրապէս ձեռք ձեռքի տուած։ — Այսպէս առ հասարակ, հայրենասիրութիւնը է մի աւելի մեծ բան, քան թէ լոկ անձնական կարծիք իւր յատուկ ազգի պատուականութեան վերայ. այո՛, նա ըստ մեծի մասին յայտնելոյ որպէս մի պատերազմ որ ճշմարիտ գաղափարը թագաւորութեան ունի ընդդէմ մոլար և նեղ ըմբռնմունքին ներկայ կարգերի մասին, այո՛ այն սիստեմատիկական ընդդիմութեան մէջ, որով հիմնական կանոնները ընդդիմանումն ժանգոտած և հնացած ուղղութիւնների։ Ինչպէս ճշմարտութիւնը դուրս է երեւում միայն երկու հակառակ կողմերի պատերազմի միջից, սոյնպէս թագաւորութիւնը կարօտ է հակառակ բժիշկների, որպէս զի հրապարակական կարծիքը, այսինքն ազգի հայեացքը կառավարութեան եղանակի և կառավարող մարդերի գործերի վերայ կարողանար կերպաւորուիլ, այնպէս որ ազգը ունենար հիմը և պատճառ հայրենասիրութեան։ Մի ազատ թագաւորութիւն առանց հակառակ բաժինների, անմտածելի է. այն տեղ, ուր սրտի եփուն և եռուն վկայութեանը, վաւաշուն հոգեխառնութեանը համարձակ չէ օգտակար բոցերով բորբոքել իւր կրակարանի մէջ, այն տեղ կրակը դուրս կը գայ տանիքից և կ'այրէ ու կը կործանէ շինուածը։ Այս պատճառով և մի իմաստուն թագաւորութիւն կանուխ հոգաբարձու է ծիսականների շինելու։ — Թագաւորութիւնը առանց հակառակ բաժինների կործանումն է։ Հասարակապետութիւնների, զոր օրինակ Աթէնքի մէջ քաղաքական օրէնք էր, որ ոչ մի քաղաքացի չմնայ անմասնակից տէրութեան խնդիրներին։ Բայց գաղտնի պօլեցիայի և պատրաստի կանգնած զօրքերի ժամանակում, անձնապաշտական սառնասրտութիւնը համարվում քաղաքական առաքինութիւն. այդ տեղ հնազանդութիւն և հանդարտութիւն, քաղքացու առաջին պարտականութիւնն է. այդ տեղ մատնողը և կոպիտ անձնասէրը համարվումն յատկապէս կատարեալ քաղաքացիք, այնպէս որ ճշմարիտ, լուսաւոր հայրենասիրութիւնը կարող չէր երբէք երեան դուրս գալ։ Ազգի առաւել ազնիւ մասը չէ մասնակից թագաւորութեանը։ — Ամենալաւ թագաւորութիւնը լինելու էր առաւել մեծ մասին հասարակաց օգտը նայ. նորա մէջ ամենայն ինչ լինելու էր ազգի համար և ամենայն ինչ ազգի ձեռնով։

Հակառակ բաժինները արծարծումն հայրենասիրութիւնը. միայն դաւադրած միաբանութիւնքը, այսինքն անյարմար կուսակցութիւնքը կործանումն նորան։ Եթէ մի ազատ աշխարհ վտանգի մէջ է, այնուհետեւ լռումն հակառակ բաժինները, որ իւրեանց զօրութիւնքը դարձուցանեն ընդդէմ հասարակաց թշնամուն։ Բայց, երբ մի լռնակալութիւն մեռ էր սարից ցած գլորուելու և նորա վերայ յարձակումն կար, այնուհետեւ բարձրանումն դաւադրած միաբանութիւնքը, որ մինը միւսից գերազանց գըտանուին հայրենիքի մատնողութեամբ։ — Ամենայն քաղաքական կեանք պիտոյ է մի անձնական սկիզբն առնէր անհատների մասնակցութեամբ թագա-

ւորութեան գործերին, զոր օրինակ պատերազմական գործը իբրև ազգի զինուորութիւն. այդպէս Հանդիսանալու էին վաճառականը ազգային զգացողութեան։ — Բայց սակաւապետական թագաւորութեան մէջ դա անկարելի է։

Ընտանութիւնը է մի ազգի անհոգոյականութիւն։ Լիակատար կշիռը մի անձնաւորութեան իւր շրջանակի մէջ — թող լինի դա մի ազգի կամ թէ մի անհատ մարդու անձնաւորութիւն — միշտ ամենամօտ կերպով լինելու է յարաբերից նորա բացայայտութեան սեփական ձևերին, նորա յիշատակների անաբատութեանը և պարծանքին, նորա բնաւորութեան անթեքելի խստութեանը։ Մարդկայնութեան պահանջողութիւնը ոչ թէ կարող էր այն լինել, որ անհատները հրաժարուէին իւրեանց բնաւորութեան սեփական յատկութիւններից, որ նորա ուրանային իւրեանց անհատութիւնը, այլ մանաւանդ, որ բնութիւնների և ձգտողութիւնների իրաւացի բազմօրինակութիւնը դաշնակաբար ներդործէր միանդամայն, որ և նորա համբերութեամբ և կամաւոր յօժարութեամբ լինէին միմեանց լծակից։ Ուր սեփական յատկութիւնը վերջանում, այն տեղ վերջանում և կեանքը։ Եթէ ամենեքեան կամէին լինել մի և նոյն, այնքան էս վատ լինելու էր աշխարհի որպիսութիւնը, որչափ եթէ ամենեքեան կամէին ունել մի և նոյնը։ Անգիտանալով և ճնշելով անհատութիւնը, իշխանութեան ճանապարհը բացվում ոճոխաբար մեծ զօրութեանը, բայց ազգային բնաւորութեան ամբողջի մէջ գտանում և ոչնչութիւն ազգը մի անցամաքելի աղբիւր քաջութեան և վերականգնութեան։ Կենսական զօրութիւնը մի և նոյն է, ինչ որ անհատականութիւնն է։ Ա՛յն ժամանակները, երբ որ մեղանչած են ընդդէմ այս հիմնական կանոնին ազգայնութեան, չէին մեծ օրինակ զոհաբերութիւնների և աշխարհաքաղաքացի յառաջադիմութիւնների ժամանակները, այլ դորա հակառակ, միւսանգամ ներս յարձակուած բռնակալութեան ժամանակները. դրա էին այն օրերը, երբ եւրոպական հաւասարակշռութեան կարգը և ազգասիճառութիւնը չափուէր թնդանօթազարկի ասպարէզներով։ Դորա հակառակ, կենդանական զօրութեամբ ճոխ ազգերը, որպէս Հրէաստան, Հռոմ և Փրանսիա օգտաբեր են եղած մարդկութեանը պարզուղիղ իւրեանց համաշխարհական ստացուածներով։ Ով որ մի ազգի ազգայնութիւն ուրանում, նա ուրանում նորա իրաւունքը և հիմքը մի յատուկ սեփական կեանքի. նա ոչ թէ բարձրացնում քաղաքացին դէպ ի մարդու աստիճան, այլ խոնարհեցնում նորան դէպ ի ծառայի ստրկութիւն։

Հ՚ատ գեղեցիկ ասում Շիլլերը.

«An's Vaterland, an's theure schliess' dich an,
Hier sind die rechten Wurzeln deiner Kraft».

«Հայրենիքին, քո սիրելի հայրենիքին եղիր դու կից,
Այդ տեղ են քո զօրութեան բուն արմատները»։

Ինչպէս մը դուրս ենք այն ժամանակներից, երբ մարդս այնքան միայն կշիռ ունէր, որքան մի գուռզամիտ թագաւորութիւն բաժին էր տալիս նորան մարդկային արժանաւորութիւնից և ազատ յարդից. երբ անհատը ասես թէ թագաւորութեան զօրութեան կշիռը կրումէր իր խոնարհեցուցած ճակատի վերայ. այլև մեք ապրում ենք ան ելի այն աշխարհի օրերում, ուր անհատի բոլոր անձնապահպանութիւնը կարող էր չափուիլ նորա հայրենասիրութեան չափով, ուր մարդս աքսորած էր և նոյն իսկ ճարտարութիւնը և գիտութիւնը ծառայում էին քաղաքացիների կամքին, որ և յետոյ դարս փոխարէն պարտ էին քաւել իւրեանց սխալանքը եկեղեցու ծանր հարստահարութեան տակ։—Ոչ. մեր աշխարհը է ազատ անհատականութեան աշխարհ. այո, մեր միապետական իշխանութիւնքն և որոշումն հին հասարակապետութիւններից այն անքանակելի բարգաւաճ ազատութեամբ մանաւոր կեանքի։ Մեք մարդիկ ենք իբրև քաղաքացիք, բայց և յատուկ բնաւորութեամբ անձինք իբրև մարդիկ։ Եւ սեփական բնաւորութիւնը, անհատականութիւնը վերածում ազգային պատմութեան, ազգային բանաստեղծութեան և աշխարհի ուսանդութիւնների ընդհանուր Հողի վերայ. կարճ ասեմ, այն բոլոր բաների միջից, որ մեր մտածութեան եղանակը անքակտելի կերպով միաւորումն մեր լեզուի, երևակայութեան և լոգիկայի հետ, որ մեր սիրտը կապումն մեր սար ու ձորի Տորիզոններին հետ, որ, երբ լսումենք մեզ ընտանի ձայներ, մեր Հայրենի աշխարհի գովասանութիւնը, մի քաղցր դող են ձգում մեր սիրտը։ Գերդաստանների պատմութիւնքը, որով այնքան պարծենումն աշխնութական տուները, են միայն Հատուկտոր մանրիներ ազգային պատմութեան, որ՝ լոլորիցուն պատկանումն որպէս սեփականութիւն։ Եւ միայն, երբ որ մի ազգ գիտակցութեամբ, այսինքն սրտի վկայութեամբ պատրաստել է իր պատմական կեանքը, զոր օրինակ Ֆրանսիացիքը, այնուհետև աշխուժապետական ուսանձնութիւնքը և որոշութիւնքը չքանումն, և ազատ քաղաքացու պարծանքը գտանում ընդհանուր, լինում ազգային զգայողութիւն։

Այլ ազգային զգայողութիւնը արտաքսվում չէ ուհասարակ, աշխարհաքաղաքացի լինելով, որպէս ընդհանուր մարդասիրութիւնը արտաքսում չէ մեր սրտից կարողութիւնը հիմնարկելու իր համար մի սեփական գերդաստան, կամ թէ մեք ան ի սրտի սիրելով փիլիսոփայական մտածութեան յաւաջադիմութիւնքը, դեռ ևս զրկվում ենք այն ուրախութենից որ պատրաստում մարդուս մի ճարտարագործութեան ան անձին գեղեցկութիւնը։

Գործոն ազնուհատազատացությունը ամփոփվում հարկայնության մէջ, այսինքն նորանում, որ մարդկութիւնը և մարդկայնութիւնը իրագործուի թագաւորութեան մէջ այնպէս, ինչպէս իսկապէս մարդկութիւնը կերպարանվում ըստ ազգերի. ուրեմն, որ մարդը ըստ իր էական բովանդակութեան և այդ

հիմքի վերայ դոյ պատիւ ու կացութիւն ունենայ թագաւորութեան մէջ, որ ազնուական մարդկային ձգտողութիւն իւր իրաւունքը, ամենայն մարդկային կառոզութիւն իւր ազատ ասպարէզը, և ամենայն մարդ իւր պատշաճ տեղը թագաւորութեան մէջ գտանէ։ Այլև, նա ամփոփվում նորա մէջ, որ թագաւորութիւնքը ազգերի իրաւունքի հիման վերայ, միմեանց հետ կապակցութեամբ ապահովին իւրեանց հպատակների բարին, իսկ համաշխարհական հաղորդակցութիւնը և մարդասէր ընդհանրքը բոլոր ազգերի հետ, թէև դրքա լինէին շատ օտար, ոտքի վերայ պահպանեն ազատութեան և կարգի երաշխաւորութեամբ։ Ազգայնութիւնը, իւր լրագործութեան համար, կարօտ է այդ փոխադարձ համաշխարհական ընդունելութեանը, և այնքան երկար մնում նա իւր խորհրդին և ապագային անվերահասու, քանի որ առանձնական ազգերը համարումեն իւրեանց անձը ընդհանուր և նախապատիւ, ամենևին այնպէս, որպէս հաւատը իրրև մեկնութիւն (ֆանատիսմոս) թուներում սիրտերը, քանի որ հաւատի պահապանքը էին գոռոզամիտ եկեղեցիք։ Այսպէս ահա պիտոյ էր յառաջացնել, որ աշխարհը պատկանէր անհատին, երբ որ անհատի իրաւունքի ընդունելութիւնը յաղթող էր հանդիսացել աշխարհի մէջ։

Արդարև թագաւորութիւնը ոչ կարող է և ոչ պիտի վստահանայ արուեստական ձանապարհներով ոտքի վերայ պահել ազգային զանազանութիւնքը. սոքա պարտ են ինքն ըստ ինքեան ոտքի վերայ մնալ։ Սուտ խաչվառներ բարձրացնելով կարելի չէ մի լուսաւոր ազգի հայրենասիրութիւն յորորել ընդդէմ մի օտար ազգի։ Կարճ ասեմ, ամենայն արուեստակութիւն այս գործի մէջ կորստաբեր է, մի բանագէտ թագաւորութիւն աշխատում ամենայն ջանադրութեամբ մարդկայնութիւն տարածել, բայց մի փոքրահոգի, հիւանդոտ թագաւորութիւն յարուցանում ազգային թշնամութիւնք, այո և այն ժամանակ, երբ դրքա վաղուց արդէն շիջած էին։ Բայց ազգայնութիւնը երբէք պահպանվում չէ զանազանող կամ բաժանող արտաքին բաներով. նորան կարելի չէ զարթեցնել մարքի պիտակցութեան մէջ, եթէ նա քնած չէր այն տեղ։ Նորան կարելի չէ հնարել, և դա չէր ունելու ոչինչ արժանաւորութիւն, որովհետև լինելու էր մի հնարած բան։ Կա վերու ազատ է ամենայն օրէնքի ազդողութենից, ինչպէս միտքը, զգացողութիւնը, կարճ ասեմ, ինչպէս ամենայն նկրքին բան։

Այն ուսուցիչքը, որ յանձն են առել քարոզել մեզ հին ազգային առանձնութիւնների կորուսած դրախտը, կամ թէ այո դորա վերաշինութիւնը, այդ հրաշալի քաղաքագէտքը, որ նախապատիւ սիրկրով կխօսէյսը, շատ կ'ախորժէին չինեական շրջապարիսպներ քարշել ազգերի չորս կողմը — դրքա չեն այն տղամարդկերը որ արդարապէս բարեացակամ էին իւրեանց հայրենիքին։ Դրքա քարշ մեն այդ պարիսպները, ոչ թէ պաշտպան հրեշտակների պէս լոցեղէն սրերով պահելու հայրենական դրախտը, այլ որ հե-

ուի պահեն ազատութեան և հաւասարութեան ոգիքը որ տպագրութեան մեծագոյն թեւերի վերայ և շոգեշարժ սայլերի փոթորկային արագութեամբ վազումեն մի կողմից դէպ ի միւսը։ Դոքա չկամին գիտել, որ ազատութիւնը և հաւասարութիւնը են միայնակ ճշմարիտ պահապանքը հայրենասիրութեան, դոքա պատերազմումեն ընդդէմ լուսաւոր հայրենասիրութեան, որ ապրումէ ըստ օրինակ Ֆրանսիական ազգի մէջ, որ բոլոր միջնադարեան աւանդութիւնքը յաղթահարել է [1]). զուր ջանք, անօգուտ վաստակ։ Ժամանակը անընդդիմանալի յառաջ է քայլումէ իւր ճանապարհի վերայ. անփրկելի կորած է նա, որ քամակը դէմ է դնում նորան. մի անձնան, ինքն իւր մէջ ոչնչացած անձնաւորութիւն կարող չէ աշխարհի մեծ և զօրաւոր շարժողութիւնքը խափանել։ Լուսաւորութիւնը հասուցել է ազգերը այն կէտին, որ պարտ են նոքա մարդկութեան խնդիրքը կամ լուծանել, կամ թէ խորասոյզ կործանելի անդունդի մէջ։ Մեր գլխի գաղջերը պիտոյ է մեզ վճռել. մի ազգայնութիւն որ ազատութեան և արդարութեան գաղափարներին իւր անդամակիցների հոգու և սրտի մէջ, զուգապատշաճ չէ, մի թագաւորութիւն, որ արմատ չունի իւր անդամակիցների հոգեւոնդութեան և քաղաքական առաքինութեան մէջ, մի ապիհարբապրնիե առանց ապային ֆիզիկեին, գրեթէ ջնջած է արդէն համաշխարհական յառաջադիմութեան աշխարհացուցից։ Կարելի չէ մնացնել հասարակաց իրաւունքը առանց հասարակաց բարեկեցութեան։ Այն օտարամիտ քաղաքական ուղղութիւնը «պատմական ասած դպրոցի» որ գիտութեամբ որոնումէ անգիտակիցը, որ կամքով ու խորհրդով հետևումէ անկամք պատահականին, որ այսպէս կամ այնպէս անցած ու գնացածի օրինակով կերպարանագործելին նախապատիւ է համարում քան թէ արարիչ բանականութեան յառաջածութիւնը, մէջ է բերել այն սերը մասնաւոր առանձնականութեան և արտօնութեան, պղծ սովորութեան իրաւունքով գոյացած անհաւասարութեան։ Չնացած բարքերի աղօտալոյս փայլողութիւնը երևումէր այդ ուղղութեանը աւելի բաղդատորիչ քան թէ պարզ լոյսը պայծառ օրէնքի։ Եւ այսպիսի պայմանով այդ ուղղութիւնը անշուշտ հասել է այն հետևութեանը, որ ազգայնութիւնը վատահամբաւած է իբրև լուսից վախեցող, մի նեղսիրտ բան, ոչ մինչև իսկապես իբրև ազգավնաս և աղնու ապետական սկիզբն։ Բայց այդ երևումէ մի չարաչար խառնաշփոթութիւն. պատճառ, որ տեղ է ասած կամ ապացուցած, թէ կայ հակառակաձայնութիւն ազգահարազատութեան և ազգային կեանքի մէջ մի կողմից, և նոր ժամանակի մեծ յառաջադիմութիւնների մէջ միւս կողմից, թէ, զոր օրինակ, ազգային հարազատութիւնը կը ջնջուէր, եթէ լինէին հրապարակական ատեանք գատաստանի, սովորութեան իրա-

---

[1]) Ֆրանսիան ունի առաւել բացորոշ կերպով յայտնի կացուցած ազգայնութիւն, բայց և է միանգամայն հայրենի երկիրը աշխարհաքաղաքական պրօպագանդայի։

ունքից կառուցանուեր ազգային օրէնստուութիւն, գաւառական փոխա-
նորդներից ազգային փոխանորդութիւն։ Ամենևին ոչ, այլ միայն ազատ օղը
և ղեւարթ շարժողութիւնը փրկում է պահպանում ազգային հոգին և աշ-
խարհի բարքը։ Այն կապկային սէրը մասնաւոր իրաւական սովորութիւն-
ների, տեղական բարբառների առանձնութեան, որպէս և տեղերի սահմա-
նափակութեան, վերաբերվում առաւելապէս դէպ ի ցեղը և գաւառը, քան
թէ դէպ ի ազգը, աշխարհը և թագաւորութիւնը։

Ուրդէն միջին դարերում ազգերը այնպէս զգացել էին միութենական
և ընդհանուր օրէնստուութեան հարկաւորութիւնը, որ նորա աւելի լաւ
համարեցին ընդունել մեռած գնացած հռոմէական իրաւունքը և նոցա վերայ
պատուաստած եկեղեցական սահմանադրութիւնը, քան թէ աւելի երկար
մնալ ու տրորուիլ իւրեանց մասնաւոր առանձնութիւնների մէջ։ Արդա-
րև սա էր մի ծուռ, արտուղի ճանապարհ, մի սխալանք. պատճառ, բնու-
թիւնը աւելի զօրաւոր էր քան թէ այս դիտաւորական ներգործութիւնը։
Հռոմէական իրաւունքը իւր տրամաբանական կառուցուածքի երևութեր
ընդունելի, որովհետև իրրև պարզ ու բացայայտ աչքի առաջև դրած, հա-
մարվում պատշաճաւոր, ներգործելու ընդդէմ զանազան ազգային իրա-
ւունքի կամահաճութեան. բայց դա այնու ամենայնիւ չկարողացաւ լիովին
չաղթահարել հին ազգային իրաւական սովորութիւնքը գերդաստանական
և պատուանդանական իրաւունքի մէջ. և այդպէս նորա գլխաւոր ներգոր-
ծութիւնը Գերմանիայի մէջ այն եղաւ, որ արտաքսեց ազգային առանձքը
և կործանեց ազգի ինքնագործունէութիւն։ Մոռութիւնը պիտի ներսից ծնա-
նի և ոչ թէ դուրսից. պարտականութիւնքը դէպ ի ընդհանուրը պարտ են
միանգամայն լինել և անհատների իրաւունք, ուրեմն — ազատութիւն, հա-
ւասարութիւն և մրցութեան կերպարանագործութիւն ներսումը, ինքնիշխա-
նութիւն դէպ ի դուրս, բայց ինքնիշխանութիւն առանց ատելութիւն չա-
րացանելու։

Պատճառ, ինչպէս ասուեցաւ վերևում, և մարդկայնութիւնը չէ այն,
որ մեք վերացնելինք մեր ազգային սահմանքը և կապերը, և ոչ իսկ այն, որ
մեք ձգտելինք դէպ ի մի տիեզերական միապետութիւն, — այլ պարզապէս
այն է, որ մեք ընդունելինք և խոստովանելինք ամենայն մարդկային կարգ և
շինութիւն, ուր ևս դա հանդիպում մեզ ազգային կերպարանքով։ Ուրեմն
բառս մարդկայնութիւն (humanité) աւելի ուղիղ նշանակում բանի իսկու-
թիւնը, քան թէ բառս աշխարհաքաղաքացութիւն (cosmopolitisme)։

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՒԱՏ. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՏԱԾՈՒԹԻՒՆ։

Մտածութեան հանգէսը դարձել է օրէ օր աւելի և աւելի տիեզերա-
կան, մինչև վերջապէս դարձեալ սկզբնահասել է դէպ ի անհատի իրաւունք։
Այս ճանապարհով ընթանում մեն խնդրականութեան բոլոր գանձերը։ Այս-

պէս, իրաւունք և ազատութիւն սկզբում էին պատուաւոր աստիճանների արտօնութիւնք, այդ տեղից հասան քաղաքացիներին, յառաջ քան թէ դարձել էին ազգային, և դարձան մարդկային իրաւունք այն ժամանակ միայն, երբ որ կարգուեցան իբրև ազգի սեփականութիւնք։ — Սոյնպէս եղած է կրօնի և մտածութեան ընթացքը։ — Աստուածպետութիւնը, քահանայութիւնը նահապետների, դերդաստանների սրբութիւնքը վաղուց չքացած են. սոցա յաջորդեցին գոպդնէք աղնուապետաբար առանձնացած քահանայական հասարակութեան, իւրեանց իշխանութիւնը տարածելով մինչև բոլոր իրաւագիտութեան վերայ, ինչպէս առ հասարակ կրօնը եղել է ճարտասութեան և գիտութեան խանձարուրքը, դպրակը մարդկային ազգի։ Գոպդնէքունի ազնուապետական ընտանութիւն, դորա հակառակ, ժողովրդավարութիւնը որոնում հրապարակականութեան։ Թագաւորութեան աստուածները հին աշխարհի մէջ տիրում էին և մարդարէականում ծածկութեան խորքից դեպ ի դուրս քարոզելով իւրեանց կամքը։

Սկսեալ այն ժամանակներից մինչև ամենանոր ժամանակը, ձգտումն արիւնոտ հետքը մի կուռ թագաւորութենական եկեղեցիների և տիեզերական եկեղեցու մէջ, եկեղեցական իշխանութեան մէջ առ հասարակ, և անհատների հաւատական ազատութեան։ — Այո՛ և այն միջոցին, երբ ազգերը պատերազմում էին ընդդէմ պապական իշխանութեան, դեռ ևս բաւական երկար անհասկանալի մնաց նոցա, թէ հաւատը կարող էր ոտքի վերայ մնալ և առանց որ և իցէ իշխանութեան. պատճառ, հաւատացեալների հասարակութիւնը պիտոյ է այնու ամենայնիւ մնար լծորդ մի կապող դաւանութեան հետ։ Լութերի հետևողքը գերմանիայի մէջ ոչինչ գործ չէին լցուցանում, բայց միայն յառաջ տանել Գիրելլենեանց կռիւը որպէս կռիւ աշխարհական իշխանութեան ընդդէմ հոգևոր իշխանութեան և վերջացնել դորան ժամանակաւոր կերպով։ Փոխվեցան տեարքը, բայց ոչ իշխանութիւնը։ — Բայց հաւատը սուրբ է միայն, ուր նա անհատական ու ազատ է, և այս մնքով ելիզեյեն պատճառ պարզուղող ներհակութեան և հակառակախոսութեան մէջ դեպ ի կրօնը։ Արդարև հաւատի և հրաշների ժամանակները եղած են նոյնպէս մարդկային ազգի մանկութեան օրերը, երբ տակաւին զարթեցած չէր ազատ ինքնագիտակցութիւնը։ Բայց դորանից երբէք կարելի չէ մնկաբերել, որ հաւհաս մարդը պարտ էր կրօնական խնդիրների մէջ իւր անձը տալ վարելու և ուղղելու որպէս մի երեխայ։ Պոպ-ռիեան պատուիրանը հերհերհնոսմ ապստռիեան հաւատք։ Երկոքեանը ունին միայն ներգործութիւն (գործ և արդիւնք), երբ որ նոքա ապստռիեն դուրս են էհհամ, ուրեմն նոցա իրականութիւնը դրած է տպած ու խօսած խօսքի ազատութեան մէջ, խնդրելու և գանգատելու իրաւունքի մէջ, արձակ ու համարձակ աստուածպաշտութեան մէջ, ամենայն ճիսական արարողութեան և ամենայն դաւանութեան հաւատարապատութեան մէջ։

Ազգային ընկերութեան ներքին միութիւնը այնքան իսկ սակաւ պայմանաւորած է ձայնակցութեամբ հաւատի մէջ, որքան աշխարհական խոստովանութիւնների բացարձակ միութեամբ, որ արտաքսելու էր ամենայն բաժիններ և բաժանութիւնք։ Ա՛ռ հասարակ, հաւատի միութիւնը մի չեզած բան է, մի անկարելի բան. դորան վերահասու են եղել մարդիկ այն ժամանակ միայն, երբ ազգայնութեան պրինցիպը (հիմնական գաղափարը) ստացել է պատմական կշիռ։

Եկեղեցին և կրօնը, երկուքն ևս չգիտեն ոչինչ թագաւորութենական սահմաններ, որովհետև նոքա հետևումն այլ շարժառիթների և կալս են այլ յառաջածու պատճառներից։ Արդարև հին աշխարհի մէջ եկեղեցին էր թագաւորութենական գործ, բայց և այն ժամանակ թագաւորութիւնը էր անմարդկային և ինքնապաշտ։ Երբ որ դեռ ևս կային կենսական զօրութեամբ աղդող եկեղեցիք, թագաւորութիւնքը բաղկանումէին ֆաոռներից, տեղերից և ֆըզվըռ-ռուբերից, դորա հակառակ, եկեղեցիքը ձգտումէին դեպ ի միութիւն և տիեզերական իշխանութիւն։ Մի թագաւորութենական կամ ազգային եկեղեցի ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի եկեղեցական միութիւն, որի մէջ թագաւորութիւնը կամ մանաւանդ թագաւորութենական ատեանքը իշխումէն խղճի վերայ ամենևին կամ թէ մի մասով — գրեթէ եկեղեցական վերակացուների հետ միասին. և ի հարկէ, ուր կրթութիւնը գտանվումէ այս աստիճանների վերայ, այն տեղ կարելի չէ մտածել ազգային ազատութիւն։ Նոյն իսկ ազգային հասարակութիւնը չէ կացուցանում քննապատշաճապէս մի եկեղեցի, այլ կրօնական հասարակութիւնը, այսինքն հոռոգյե-ընէե ֆըզվը։

Այս կերպարանագործութեան ընթացքը ցուցանումէ և եւրոպական հոգևորականութիւնը։ Սկզբումն երևումէ դա մի իշխանութիւն եկեղեցական կալուածների արդիւնքով և որոշեալ աղքատի իրաւունքով, ապա մի առանձին ժողովրդակարգ, յետոյ որպէս պաշտօնատարք, Թոշակառուք թագաւորութենից միայն, բայց այժմ ընդդէմ դորան բարձրանումէ պահանջողութիւն, որ հասարակութիւնը լինի ազատ և հասարակութիւնը ունենայ ընտրութիւն։

Հաւատի ազատութիւնը պահանջումէ մի անպայման հաւասարակարգութիւն բոլոր դաւանութիւնների, կամ մանաւանդ մի լիակատար անընդրողութիւն թագաւորութեան կողմից դեպ ի որ և իցէ դաւանութեան բռվանդակութիւնը։ Նոյն իսկ կրօնների արժանաւորութիւնը յառաջ է բերում այս պահանջողութիւնը. պատճառ, արժանաւոր և սուրբ է այն միայն, որ ինքն ըստ ինքեան, իւր յատուկ զօրութեամբ պահվումէ ոտքի վերայ։ — Բայց երբ, սորա հակառակ, աշխարհական ու հոգևոր իշխանութիւնը գտանվումէ մի և նոյն հրամանակալի ձեռնում, այնուհետև հերձուածողը պատժվումէ նոյնպէս իբրև քրէական յանցաւոր։

Ազատութիւնը սրտի վկայութիւնների և լուսին հաւասարակարգութիւնը բոլոր դաւանութիւնների է մի աւելի ընդարձակ բան, քան թէ Տօ-լերանս (Թոլստոյութիւն) ասած բանը. ըստ որում դա Թոլ տալով, ներելով միայն, ընծայումէ ինքն իւրեան որչափ և իցէ նախապատիւ կշիռ։ Թոլստոյութիւնը դէպ ի պլագաւանքը, է առհասարակ մի նեղ և սահմանափակ հիմք. մի կողմից շնորհումէ նա շատ սակաւ, միւսից կողմից այս սակաւն էլ կարող չէ արդարացնել, ուրեմն շնորհումէ նա շատ։ Եւ այդ Թոլստոյութիւնը, ներողամտութիւնը ցուցանվումէ երկրորդական բաների մէջ, զոր օրինակ դէպ ի չափազանց նրբութիւնքը դաւանաբանական վէճերի մէջ, բայց սոյն իսկ մանր ու մունր բաների մէջ առաւելապէս երևումէ կրօնների առանձնասէր և Թշնամական հոգին. ֆանատիսմոը գործակատար է ուշադիր լինելով խոտորմունքին, բայց ոչ ընդհանրապէս համաձայնին.— այլև կարծիք է յառաջանում, մի՞ թէ նոյն իսկ ներողամտութիւնը կարող էր նեղողամիտ լինել դէպ ի աննեղողամտութիւնը, աննախանձ դէպ նախանձաւորութիւնը։

Արդարև, այս ժառանգական Թշնամիքը մարդկային ազգի կարելի է միայն անվնաս կացուցանել, շնորհելով խղճերին մի լիակատար ազատութիւն, և զորա հետ հարկաւորապէս կապակից է ազատութիւնը հոգեկան։ Չ՚՚՚ազատութեան անհրաժարելի հետևութիւնը է մտածութեան ազատութիւնը. հաւատի իշխանութեանը դէմ դէմ՝ գտանվումէ իբրև մի հատ ճար ու դեղ, մտածութեան ազատութիւնը։

Խղճի բռնադատութիւնը և նիւթական կարողութիւնը ստորերկրեայ գնացքով կապակից են միմեանց հետ. ուր թագաւորումն հաւատի զօրութիւնքը, այն տեղ անապաշտութիւնը շուտով կառուցանումէ կուռքեր օտարաձայն վերտառութեամբք...։ Բայց իրաւունքը պիտի յառաջանայ ինքն իր իսկութենից. թագաւորութիւնը պիտի հիմնած լինի ազգի լուսաւոր կամքի վերայ. թէպէտ իրաւունք ու թագաւորութիւն, ըստ իւրեանց բնութեան, են դրական (positiv), որպէս ինքը կրօնը, բայց օրէնքի դրականութիւնը է իր սեփականը և ոչ թէ կրօնից փոխ առած։ Դա է դրականութիւնը ինքնաբար որոշող մարդկային բնութեան։ Թագաւորութիւնը է ՚՚՚, ուր տալիս են նորան օտար հիմքեր, զոր օրինակ թագաւորութեան մտահայեցութիւնքը գերմանական քրիստոնեայ ազգերի, անպատճառ տանումն մեզ դէպ ի աներազատ, բռնակալական և բարբարոսական օրինակարգութիւնք։ Բայ ի սորանից, զրեթէ բոլոր կրօնները պարունակումն իւրեանց մէջ թագաւորութեան վնասակար ուսմունք. նորա ըստ մեծի մասին օտարացնումն այս աշխարհից հաւատացեալների սիրտը, խոստանալով նոցա մի քաղցր, հրապուրիչ գալոցք հանդերձեալ աշխարհումը. նորա շատ ու շատ անգամ առաքինութեան երկիւղածութիւնը և առանին առաքինութիւնը դնումն քաղաքական գործի անունի տակ։— Գոյողութիւնը շինելու կրօնը կամ

Եկեղեցին դէպ ուղիղ հիմք թագաւորութիւնների, ոչ թէ պատկանում մի գաղափարական (idéal) հայեացքի, այլ գործ է դնում և ցած է քարշում սրտի զօրութիւնը դէպ ի պօլեդիական կարգերի աստիճան։ — Երբ որ խիստ կաթոլիկականութիւնը պատրաստում ժողովուրդը դէպ ի «յաւիտենական փրկութիւնը հոգու» և մեզքի թողութեան շահավաճառութիւնը յարդարում ծածուկ ճանապարհները դէպ ի երկինք, երբ «Հանդերձեալ աշխարհը» քանում ու ծծումբ իւր մէջ մարդու նուիրական րոպէները, սրտի խաղացմունքը և երկիւղածութիւնը, նորա հոգեւանդութեան և գործականութեան կարողութիւնը, այդ միջոցին «Ներկայ աշխարհս», թագաւորութիւնը, շատ ողբալի կացութեան մէջ էր, ամենայն բան թշուառ, վայր ի վերոյ, ցան ու ցիր պատառուած։ Ա՛յն կրօնը որ աստուածային յայտնութեան մեռած տառի վերայ է հիմնվում, առանց խորամուխ լինելու նորա կենդանի, շարժուն և յաւերժական հոգու մէջ, անպատճառ պիտոյ է լինի դադարուն, անշարժ. այդպիսի կրօնը քարողում միշտ մի և նոյն բանը, բայց քաղաքականութիւնը պարտ է յառաջ գնալ. այդպիսի կրօնը սիրում միայն մարտիրոսութիւն, բայց քաղաքականութիւնը կամի պտղաբերութիւն, արգասիք. կրօնը կամի երանութիւն պարգևել, բայց թագաւորութիւնը պիտոյ է բաղդաւոր կացուցանէ. Եկեղեցին պահում հաւատացեալը մշտնջենաւոր հոգեբարձրութեան դէմ, բայց թագաւորութիւնը պարտ է դաստիարակել նորան դէպ ի ջախջախութիւն, և կառուցած է կամքի ազատութեան վերայ։ Արդարև կարճատես երկիւղած ազգերը անաջողակ են դէպ ի կառավարութիւն աշխարհի. նոցա պակաս է ամենայն աշխարհային հանճար, քաղաքական խնամատարութիւն և քաջագործութիւն, որպիսի տեսանում ենք հին հեթանոսների և այժմեան քրիստոնեայ և մահմետական ազգերի մէջ, Եւրոպայում և Ասիայում, այո՛ և Չինաստանում։

Թագաւորութիւնը սուրբ է, որպէս հաւատը, և աւելի սուրբ է քան թէ եկեղեցին, որովհետև բուն մարդկային է, այսինքն պատկանում գիտակցից մարդկութեանը, և որովհետև բանականութիւնը վեր է քան թէ բնազդական զօրութիւնը հաւատի, երևակայութեան և զգացողութեան (երևակայութիւն և զգացողութիւն այս սահմանների մէջ մնալորեցնում դէպ ի անապաշտութիւն և սխալ դատողութիւն)։

Թագաւորութիւնը է ճշմարիտ եկեղեցին մարդկութեան. ամենաւելին պայքը Հոգեւանդութեան դէպ ի Աստուածը ազատութեան, դէպ ի մարդկութիւն, դիմում ազատ թագաւորութեան թևերի տակ և աշխատում իրագործել նորա մէջ իւր մեսաւորական գաղափարքը, որովհետև այդ իրագործութիւնը ոչինչ տեղ այլևս հնարաւոր չէ։ Երաւունքի, բարոյականութեան և ազատութեան հոգին, լինում թագաւորութեան մէջ անհրաժարելի հաւասար և ներքնաքաղաքական, (դուրս գալով բարոյապէս արժանի կանանութենից, բայց և այնպէս մնալով ստոր)։ — Թագաւորութիւնը չէ այլևս

նորանից կախ, արդեօք անհատները կամենում են աղնիւը թէ ոչ. այլ, աղնիւը պիտոյ է թագաւորութեան մէջ հարկաւորապէս կատարւի ամենեցուն համար և ամենեցուն գործակցութեամբ: Թագաւորութիւնը միանձնեայր է, որովհետև ոչինչ աւելի վերին, նորան չափ ու սահման տուող պայման չկայ. նա կարող է կործանուիլ, ինչպէս ամբանութիւնը — ամենայն քրիստոնէական եկեղեցիների մէջ անքակտելի և անլուծանելի ըստ գաղափարին — կարող է լուծանուիլ ինչ ինչ դիպուածներում [1]), բայց ինչպէս սա, կարող չէ ժամանակաւոր կերպով հաստատուիլ, նոյնպէս կարող չէ մի ազգ կամաւորապէս հրաժարուիլ թագաւորութենից: Եւ ոչ իսկ անհատը կարող է դուրս գալ թագաւորութեան միջից, այլ միայն փոխանցել մինից դէպ ի միւսը: Թագաւորութիւնը ոչ թէ ազգի ղեկտան է միայն, այլ նորա մարմինը:

Այս բոլորը առած միասին, պիտոյ է ասել, որ այնու ամենայնիւ թէ թագաւորութիւնը և թէ եկեղեցին չունի իրաւունք դուրս դնել մի ստիպողական օրինադիրք բարոյականութեան կամ թէ հրամայել հաւատական կանոններ: Բարոյականութեան որպէս և հաւատի խոստութիւնը պահանջում, որ երկուքն էլ ընծին կամայական: Եթէ թագաւորութիւնը խոստովանում եկեղեցին, կամ թէ խոստովանում ոչ եկեղեցի, այնուհետև ստորադրած է և նա եկեղեցու տակ, մի պայման, մի հաւասարութիւն անկարելի է այս տեղ: Բայց թագաւորութիւնը ինքն է ամենավերին տեսակը բարոյականութեան, այսինքն, նա կարող է հասանել դորան. պատճառ, ամենայն անձնանուիրութիւն և մարդասիրութիւն կարող է թագաւորութեան մէջ մի շատ լիակատար բացորոշութիւն ստանալ որպէս օրէնք, դուրս գալ անձնական հաճոյքի տակից, առանց ընկնելու մեքենականութեան տակ: — Բայց թագաւորութիւնը չէ ամենակարող. միտքը դրած է նորանից դուրս և մտածութիւնը դրած է նորանից վեր. միտքը որպէս հասարակաց կարծիքը առաջնորդւում և իշխւում նորան. միտքը որպէս դիտութիւն կարող չէ նուաճուիլ նորա իշխանութեան տակ: Այլև օր օր կերպարանւող հասարակաց կարծիքը, այսինքն օրախոսական տպագրութիւնը պիտոյ է ունենայ համարձակութիւն ծիլելու և ածելու, որ չափ ու հասակ առնու իրրև մի ամուր տունկ: Տպագրութիւնը էբէբ+ վոռնդուր չէ. պատճառ, հակաճառութեան

---

[1]) Հայոց ծէսքանները (կռուսաէրքը) ոչ թէ իւրեանց կրօնասիրութեամբ, այլ իւրեանց կեղտոտ թշնամական ախտով բորբոքուած, գարձեալ վեր կը կենան մեր վերայ կարդալով այդ բառերը: Մեզ շատ լաւ յայտնի է աւետարանական ուսումը թէ «Ջոր Աստուած զուգեաց, մարդ մի վեներնայէ». և նա իւր բոլոր գրուածների մէջ չէ այլապէս ուսուցել, այնարկելով միայն այն բացառութիւնը, թէև շատ յաւելի և ողբալի, որ եղած է աշխարհումս, է և կը լինի: Թող Հայոց ծէսքանները այնչացնեն այդ արատաւոր բացառութեան եղելութիւնը այս տեղ և այն տեղ Հայերի մէջ ևս, որ լաւ յայտնի է մեզ, ապա թէ պարտաւորեն մեր խօսքը. երբ որ իրը կայ իսկութեամբ, պիտի լինի և անունը: Ով որ չկամի լսել մի ցաւի անուն, թող վերացնէ ցաւալ նոյն իսկ ցաւը. բայց ծածկելով մի ցաւ, դա դեռ ևս չէ դառնում առողջութիւն:

հրապարակութիւնը բժշկումէ այն վէրքը, որ նա հասուցանումէ։ Մի վտանգաւոր տպագրութիւն (մատենագրութիւն կամ օրագրութիւն) ենթադրելու էր մի թագաւորութիւն, որ ընդդիմանումէր աղգային հոդու և հասարակաց կարծիքի աղբիւրներին, և կործանումէր իւր յատուկ հիմքերը։ Միտքը թո՛ղ լինի թագաւորութեանը սուրբ, թէև տակաւին անկատար, դուրս էր երևումէ մի անձնական կերպարանքով միայն։ Տպագրութիւնը սխալվումէ, բայց չէ մեղանչումէ։ Նա չէ գործում յանցանք, և ոչ իսկ նորա սխալանքի վերայ կարող էր մի մարդ դատաւոր նոքին. այդ սխալանքը կարելի է հերքել (ջրել), բայց ոչ պատժել։ «Աւրելը չէ պատասխանել» ասել է Գրանսիացի կամիլլոս Դէսմուլէն։ Պատժելով կարելի չէ բնաջինջ առնել մի գաղափար. մտածողի վերայ պատիժ դնելը, յուցանումէ միայն հերքողութեան դժուարութիւնը։ Ոչ՝ չկայ յատկապէս ոչինչ տպագրական յանցանք. այո կարելի է դէպ ի չարը գործ դնել տպագրութիւնը, վշտացնելով սորա և նորա պատիւը, բամբասելով, թշնամանելով և այլն, բայց անիրաւութիւնը դրած է ոչ թէ տպագրութեան, այլ վշտացուցման և բամբասանքի մէջ։ Սպանութիւնը յանցանք է, թէ սրով եղաւ և թէ թունով։ Բայց այդ տեղ ոչ սուրն է մեղաւոր և ոչ թոյնը։

Այլ հին օրերի հոդով կառավարող թագաւորութիւնքը առաջնորդվումեն այսպիսի կարծիքով, որ մտածողութիւնը և տպագրութիւնը ինքն ըստ ինքեան վնասակար է, որովհետև դա չէ յարմարվում նոցա կառավարեան հին կարգերին և պաշտօնակալների բռնակալութեանը։ Այդ պատճառով արժան են համարել մատենագիրը և մատենագրութիւն դնել պօլիցիական վերակացութեան տակ, կարգելով ցենսուրական տեսանք, կամ թէ երաշխաւորութիւնք պահանջելով յառաջուց, ապահով կացուցանել իւր անձը օրական տպագրութեան պատժելի ընթացքից, ինչպէս Գրանսիայում։ Ցիրաւի, այսպիսի պօլիցիական հնարներով պատուելի անձինքը մատենագիրների զրկվումեն իւրեանց անտարակուսելի իրաւունքից ժողովրդի յարգութեան վերայ. բայց այս կասկածանքը հասարակաց կարծիքի մէջ դարձեալ վնասորվումէ ընդդէմ նոցա, որ կամէին կասկածելի կացուցանել մատենագրութիւնը։ Մի թագաւորութիւն, որ երկիւղ ունի աւելի շատ բաներից քան թէ միայն յանցաւոր գործերը, մի թագաւորութիւն, որ հասարակաց վնասակար է համարում իմացական շարժողութիւնը և յառաջադիմութիւնը, է միանգամայն և ԷՒՒՈ և վախեցուցիչ. նա հիմնվումէ ահ ու դողի, բայց ոչ սիրոյ և խոստովանութեան վերայ, և այդպէս ինքը դատապարտումէ իւր անձը արժանի կործանման։ Մեր հայրենի թագաւորութեան պարծանքի համար պիտոյ էր ասել, որ սկսեալ Օգոստափառ Ալէքսանդր Նիկոլայեվիչի աթոռակալութենից մինչև այսօր վայելումէ Ռուսաստանը այնպիսի ազատութիւնք և իրաւունք ցենսուրական տեսաններից, որոնցից զուրկ է նոյն իսկ Գրանսիան։ Կարելի չէ առանց մի քաղցր ապաւորութեան

նկատել շատ ռուսական ընկերութիւնների մէջ այն լուն մարդկային հոգին, լուն մարդկային հայեացքը և դատողութիւնքը կեանքի խնդիրների վերայ, որ անմիջապար յառաջացել են ազատ մատենագրութեան ներգործութեամբ։ Մեք յոյս ունինք, որ մեր սիրելի հայրենական Ռուսաստանը իւր աւելի բարգաւաճութեան և պարծանքի համար, մի օր և'ս առաւել կ'ընդարձակէ տպագրութեան աղատութիւնքը, միայն թէ հասարակութիւնը և մատենագիրքը իւրեանց բարոյական մեծութեամբ և առողջամիտ բանագիտութեամբ իւրեանց անձը արժանի կացուցանէին այդ կայսերական շնորհին։

Եթէ քննենք Ցենսուրայի յառաջագայութիւնը պատմաբանապար, դա է Հռոմէական Պապերի եկեղեցական իշխանութեան գիւտը. դա առաջին անգամն ներս լերուեցաւ ընդդէմ՝ բեֆորմատօրական շարժողութիւնների եկեղեցու մէջ և եկեղեցուց դուրս։ Հռոմի Պապերից անցաւ դա իշխանների ձեռքը, որ դորան իւրեանց ժառանգած եկեղեցական մեծաւորութեան ցուցակի մէջ գտել էին, և այս զէնքով սկսան նոքա այնուհետև յառաջ տանել հին վկայութիւնների դարանագործ, բայց անօգուտ պատերազմը ընդդէմ ազատ մտածութեան և գիտութեան։

Ազատորութիւնը, իբրև կաղմուած արդարութեան, պարտ է հիմնաւորուիլ մտքի և գիտութեան վերայ. նա պարտ է սոցա մի ազատ գործակատարութեան հանդէս տալ, որովհետև նա կարող չէ առաջնորդել նոցա, և ունի աւելի բան ստանալու նոցանից քան թէ շնորհելու նոցա։ Եթէ կրօնապաշտութիւնը (ինչպէս որ անհատը մտքով պատկերացնումէ Աստուած և ինչ տեսակների տակ պաշտումէ նորան) ըստ իւր բնութեան է մի առանձին և ընկերական գործ, ապա գիտութիւնը է հրապարակական իմացականութեան գործ. Ազատորութիւնը թոյղ տուլանաւոր լինի նորան, թոյղ նորա մուտքը բանալ ամեն մարդու համար, բայց իշխել նորա վերայ — ոչ երբեք։ Եւս աւելի սակաւ կարելի էր թոյլ տալ, որ եկեղեցին ազդողութիւն ունենայ ուսումնական դպրոցների վերայ։ Այն տէրութիւնքը որ հաստատել են իւրեանց մէջքը գիտութեան ազատութեան վերայ, ունին մի անչափելի տևականութիւն, բայց այն Ազատորութիւնքը, որ յանձն էին առել երեխայաբար հնազանդել կրօնի կամ եկեղեցու իշխանութեանը, կործանուել են ամենաթշուառ կերպով — այն պատճառով ահա, որ նոքա պատկանումեն անցած ու թառամած աշխարհի ժամանակներին։ Բայց Ֆեռնէյնէը, այսինքն ինքնագիտակից մարդկային հոգին է, որին յանձնուելու է բոլոր հրապարակական և ընկերական կեանքի գալոցքը։ — Սրտերի վկայութիւնների մէջ դրած են համաձայնութեան ծիլերը, իսկ անհիմն կարծիքի և մնապաշտութեան մէջ սղբիւրը ամենայն երկպառակութիւնների։ Եւ այս պատճառով, ճշմարտութիւնը և միաբանութիւնը շինումէ Ազատորութիւնքը, բայց սուտը և երկպառակութիւնը կործանումէ նորանց. միտքը շինող է, բայց սխալ դաստողութիւնը քանդող։ Եթէ հասարակ իրիկն է հիմը

ընկերութեան, ապա հետևումէ սորանից որ ընկերութիւնը կարող է միայն կազմուիլ մի ազգային դաստիարակութեամբ որ տարածումէ լուսաւորութիւն և կրթութիւն։

Ս. Նալբեանց։

ԱԶԱՏ ՄԱՐԴ։

Մարդ, դու պատկեր ես և նմանութիւն
Ահի վեհ Արարչին, որ խնամումէ քեզ։
Սիրիր ուրիմքին միշտ ազատութիւն,
Հոգով անպղտոր, սրտով սուրբ և հեզ։

Նա, ով աղնիւ մարդ, կարող է միայն
Քո կեանք ու վախճան վերհամարձ առնել։
Նա միայն հոգին քրիստոնէութեան,
կարող է քո մէջ սիրել, ծաւալել։

Ազատութիւնն է կեանք և զօրութիւն,
Թագաւոր, իշխան, և հարստութիւն։
Ազատութիւնը — դաստիր սրբութեան,
Փրկիչ ազգերի, աստուած մարդկութեան։

Նա սէր է մաքուր և երանութեան յոյս,
Առաքինութեամբ և շնորհով լի։
Նորա մէջ պայծառ ծաւալումէ լոյս,
կաշառել նորան չէ կարող ոսկի։

Նա, որ չէ ընդդէմ սէր ընկերութեան,
Յարգելով օրէնք մեծ և առաջին։
Որին չեն շարժում յուզմունք սրբազան, —
Ազատ չէ նա, այլ սպասաւոր դիւին։

Ազատ չէ այն մարդն, որ հասարակաց
Արհամարհելով բարեբաղդութիւն,
Ասել է սրտում։ ինձ գործ անմոռաց։
Փոյթ է հարկաւոր և հարստութիւն։

Ազատ է մարդն է ազատ, որ անձնանուէր
Զոհել է իւր կեանքն ազգին, անխռով,
Որ հարուստներին չէ ծախել խունկեր,
Մարդահաճութեան տաղեր երգելով։

Ազատ այն հոգին, որին չէ պրաւել
Անմիտ ամբոխի ծափահարութիւն.
Որին բնաւին չէ վհատացրել
կոպիտ մարդերի չարագործութիւն։

Ս. Շահազիզեանց։

1. Հիւսիսափայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մանաւորապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ:

2. Ինագիտական ճառեր, այսինքն բնութեան օրէնքների և դոյա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր զանազան ֆիզիքական յայտնագործութեանների, հասարակաւոս Աստեղաբաշխութեան, Քիմիայի, Հանքաբանութեան և Ֆիզիօլոգիայի վերայ. այլև բանախոսութիւն տունկերի, գիտութեան արժանի բոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենդաղօղուտ գիւտերի և յայտնագործութեանների մասին:

3. Խարտյական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և զգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով. թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութենից. այլև կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ:

Ցանկացողքը ստանալ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի Հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. Въ Редакцію Армянскаго Журпала «*Съверное Сіяніе*», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. կամ թէ Մոսկվայի Նամակատանը այսպիսի հասցէով. Въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Տարեկան 12 տետրակների գինը է 8 մանեթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար $9\frac{1}{2}$ մանեթ:

Одобрено Цензурою въ С.-Петербургѣ, 23 Мая 1862 года.